

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

« ԱՍ ՇԻՆ 80 »

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՏԵՂԻ ԲԱԶԱԼՏԱՅԻՆ ԱՆԴԵԶԻՏՆԵՐԻ
ՀԱՆՔԵՐԵՎԱԿՄԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ
ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

Տնօրեն՝

Ս. ՂՈՒԼՈՒՆՑ

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	6
Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	6
Նախատեսվող գործունեության բնութագիրը	11
Նախագծման նորմատիվ-իրավական հենքը	17
2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	21
Գտնվելու վայրը	21
Ռելիեֆ, երկրաձևաբանություն	24
Սողանքներ, սեյսմիկ բնութագիր	26
Շրջանի կլիման	28
Մթնոլորտային օդ	32
Ջրային ռեսուրսներ	34
Հողեր	35
Բուսական և կենդանական աշխարհ	37
Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	42
3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	46
Ենթակառուցվածքներ	46
Հողերի տնտեսական յուրացման բնութագիր	50
Պատմության, մշակութային հուշարձաններ	55
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	57
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	62
6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	66
7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	68
6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ	70
Օգտագործված գրականության ցանկ	73
Հայցվող տարածքի իրադրային հատակագիծ (կազմված 1 :10000 մասշտաբի տեղագրական հենքի վրա)	74

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ընդերք՝ հողածածկույթից ներքև, իսկ դրա բացակայության դեպքում՝ երկրի մակերևույթից, ջրավազանների կամ ջրհոսքերի հատակից ներքև՝ ըստ խորության տեղադրված երկրակեղևի մաս, որը մատչելի է ընդերքօգտագործման համար.

Ընդերքօգտագործում՝ երկրաբանական ուսումնասիրությունների, օգտակար հանածոների արդյունահանման նպատակներով ընդերքի օգտագործում կամ ընդերքօգտագործման թափոնների վերամշակում.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել կամ վերագնահատել օգտակար հանածոների պաշարները.

Օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն՝ թույլտվություն, որն իրավունք է տալիս ընդերքի որոշակի տեղամասում իրականացնելու օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) ընդերքօգտագործման թափոնների վերամշակման աշխատանքներ.

Ընդերքի տեղամաս՝ որոշակի աշխարհագրական սահմանանշում պարունակող ընդերքի մաս, որում պետք է իրականացվեն ընդերքօգտագործման աշխատանքներ.

Օգտակար հանածո՝ ընդերքում պարփակված պինդ հանքային գոյացումներ, հեղուկ կամ գազային բաղադրամասեր, այդ թվում՝ ստորերկրյա ջրեր (քաղցրահամ և հանքային) և երկրաջերմային էներգիա, ջրավազանների, ջրհոսքերի հատակային նստվածքներ, որոնց քիմիական կազմը և ֆիզիկական հատկանիշները թույլ են տալիս դրանք օգտագործել ուղղակիորեն կամ վերամշակումից հետո.

Օգտակար հանածոյի պաշարներ՝ օգտակար հանածոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են.

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանածոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Ընդերքօգտագործման իրավունք՝ համապատասխան ընդերքօգտագործման համաձայնությունով կամ թույլտվությունով, ծրագրով կամ նախագծով, ընդերքօգտագործման պայմանագրով, լեռնահատկացման ակտով հավաստվող՝ ընդերքի որոշակի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության կամ օգտակար հանածոների արդյունահանման բացառիկ իրավունքներ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատական՝ երկրաբանական ուսումնասիրությունների և օգտակար հանածոների արդյունահանման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների բացահայտում և գնահատում

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման եզրին գտնվող կենդանիների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին

Հող՝ երկրի մակերևութային բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրության փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

▪ *Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը*

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ:

Շրջանի երկրաբանական կառուցվածքի և օգտակար հանածոների հանքավայրերի ուսումնասիրությամբ տարբեր տարիներին զբաղվել են Հ.Աբիխը, Կ.Պաֆենհոլցը, Ռ. Առաքելյանը, Ն.Կոտլյարը, Ա.Աթաբեկյանը, Լ.Ահարոնյանը, Պ. Եփրեմյանը, Վ.Մ.Ամարյանը և ուրիշներ:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում հիմնականում մասնակցում են երրորդական և չորրորդական ժամանակաշրջանի ապարներ, ինչպես նաև ժամանակակից առաջացումներ: Շրջանի ապարների շերտագրական կտրվածքը ներքևից վերն ներկայացված է հետևյալ կերպ.

Վերին կավիճ

Հանդես է գալիս ստորին և վերին սենոնի հարկերով, վերին սենոնի ստորին ու վերին հարկերով: Վերին կավճի հասակի ապարները հետախուզվող շրջանում հիմնականում չեն մերկանում, բացառությամբ վերին կավճի սենոնի վերին հարկի ապարներից, որոնք տարածված են հետախուզվող շրջանի արևմտյան մասում և հազվադեպ հանդիպում են փոքր ելքեր երկրի մակերեսի վրա: Վերին կավճի հասակի ապարները հիմնականում հայտնաբերվել են խորքային հորատանցքերով և արտացոլված են միայն կտրվածքում և ներկայացված են հրաբխանստվածքային ապարների բարդ հերթափոխությամբ (պորֆիրիտներ, դրանց տուֆեր և տուֆաավազաքարեր, տուֆաբրեկչիաներ տուֆակոնգլոմերատների ոսպնյակներով, կրաքարերով, կոնգլոմերատներով և ավազաքարերով): Շերտախմբի հզորությունը կազմում է մի քանի տասնյակից մինչև 1000մ:

ՊԱԼԵՈԳԵՆ

Այս հասակի ապարները ներկայացված են ստորին պալեոգենի մինչև 200մ հզորության տարակազմ հրաբխածին-նստվածքային և նստվածքային առաջացումներով և ներկայացված են ավազաքարերով, տուֆաավազաքարերով, տուֆաավազաքարերով և տուֆիտներով: Ներկայացված են միայն կտրվածքում:

ՆԵՌՁԵՆ

Այս հասակի ապարները հանդես են գալիս հիմնականում վերին պլիոցենի դարսաշերտերով: Շերտախմբի հզորությունը տատանվում է 50-ից մինչև 450մ սահմաններում: Ներկայացված են հրաբխածին-բեկորային առաջացումներով, որոնք աններդաշնակորեն ծածկում են պալեոգենի առաջացումների տարբեր հորիզոնները և տարածված են շրջանի գերակշռող մասում: Այս հասակի ապարները ներկայացված են հետևյալ դարսաշերտերով:

Տեղամասի շրջանում վերին պլիոցենը հանդես է գալիս Իշխանասարի հրաբխա-էքստրուզիվ զանգվածի 4-րդ, 2-րդ և ստորին դարսաշերտերով, որոնց ընդհանուր հզորությունը կազմում է մոտ 500մ և նկարագիրը բերվում է ստորև:

Վերին պլիոցենի չորրորդ դարսաշերտ – ներկայացված է պիրոքսենային անդեզիտներով, տարածված են շրջանի հյուսիսային մասում: Հզորությունը 5մ-ից մինչև 130մ է:

Վերին պլիոցեն երկրորդ դարսաշերտի ստորին շերտախումբ – ներկայացված է դոլերիտային բազալտներով, անդեզիտաբազալտներով: Հզորությունը 3մ-ից մինչև 50մ է:

Վերին պլիոցեն երկրորդ դարսաշերտ – ներկայացված է անդեզիտա-բազալտներով, որոնք տեղ-տեղ անցում են կատարում տրախիանդեզիտ-բազալտների: Հզորությունը 3մ-ից մինչև 150մ է:

Վերին պլիոցեն - Գորիսի շերտախումբ, տարածված է Որոտան գետի հովտում: Այս հասակին են վերագրվում բազալտային, անդեզիտային առաջացումները, որոնք պարունակում են դիատոմիտային կավերի, ավազների և գլաքարերի ենթաշերտեր: Այս ապարները աններդաշնակորեն ծածկում են Սիսիանի շերտախմբի ապարներին: Գորիսի շերտախմբին են վերագրվում հետազոտված Վաղատինի հանքավայրի տրախիանդեզիտները:

Լայն տարածում ունեն հետախուզվող տեղամասում, ներկայացված երկրաբանական քարտեզի սահմաններում մերկանում են այս շերտախմբի 2-րդ դարսաշերտի առաջացումները, որոնք հիմնականում ներկայացված են անդեզիտաբազալտներով, բազալտներով, բազալտային անդեզիտներով: Շերտախմբի

հզորությունը 600մ է, իսկ տեղամասի շրջանում դրանց հզորությունը տատանվում է 5-85 մ-ի սահմաններում:

Չ Ո Ր Ր Ո Ր Դ Ա Կ Ա Ն

Այս հասակի միջին բաժնին են վերագրվում (ներկայացված երկրաբանական քար-տեղի սահմաններում) մեծ տարածում ունեցող լավային ծածկոցները և դելյուվիալ-էյուվիալ, պրոլյուվիալ-ալյուվիալ առաջացումները:

Վերին պլիոցեն-ստորին պլեյստոցեն: Այս հասակին է վերագրվում հզոր՝ մինչև 70մ հզորության բազալտների հոսքը:

Ստորին-միջին չորրորդականին են վերագրվում բարձր դարավանդների ալյուվիալ-պրոլյուվիալ մեծաքարա-գլաքարային առաջացումները, կավերը, կավավազները, ավազակավերը, անդեզիտաբազալտների և անդեզիտների շերտախմբերը, որոնք հիմնականում ծածկված են ավելի երիտասարդ լավային ծածկոցներով: Շերտախմբի հզորությունը մինչև 90մ է:

Վերին չորրորդական-ժամանակակից հասակին վերագրվում են պրոլյուվիալ-դելյուվիալ և սողանքային առաջացումները, որոնք ներկայացված են ավազակավերով, կավերով և խճաբեկորային նյութով: Դրանց հզորությունը մոտ 50մ է:

Բավականին մեծ տարածում ունեն ժամանակակից ալյուվիալ և լճային նստվածքները, ներկայացված՝ ավազներով, գլաքարերով, ավազակավերով, կավավազներով և կավերով: Այս նստվածքների հզորությունը չի գերազանցում 40մ-ը: Այս առաջացումները լայն տարածում ունեն գետահովիտներում, լեռնալանջերի հարթեցված մասերում: Ալյուվիալ-պրոլյուվիալ նստվածքները հարում են ժամանակակից գետերի հունային և վերհունային դարավանդներին, ներկայացված են տեսակավորված գլաքարերով և ավազախճային նստվածքներով: Ալյուվիալ առաջացումների հզորությունը հասնում է մինչև 10 մ:

Ժամանակակից առաջացումները լայն տարածում ունեն և ներկայացված են ալ-յուվիալ-պրոլյուվիալ (ավազա-գլաքարային, կոպճային) ու դելյուվիալ (ավազակավային, ավազախճային) նստվածքներով, որոնց հզորությունը հասնում է մինչև 10-15 մ-ի:

Այլովիալ-պրոյովիալ նստվածքները հարում են ժամանակակից գետերի հունային և վերհունային դարավանդներին, ներկայացված են վատ տեսակավորված գլաքարերով և ավազախճային նստվածքներով:

Դելյովիալ առաջացումները կուտակված են հիմնականում լեռնալանջերին, ներկայացված են տարբեր, հիմնականում լավային ապարների բեկորներով, ավազավային, ավազախճային թափվածքներով և նստվածքներով:

Մերձհրաբխային և ներժայթքային առաջացումներ: Այս խմբի ապարները բավականին մեծ տարածում ունեն և ներդրված են պալեոգենի հրաբխանստվածքային ապարներում: Մերձհրաբխային ապարները ներկայացված են անդեզիտներով, անդեզիտաբազալտներով, դացիտներով, անդեզիտադացիտներով, րիոդացիտներով, րիոլիտներով: Այս ապարներին վերագրվում է վերին միոցեն-ստորին պլիոցենյան հասակ:

Տեկտոնական առումով շրջանը համարվում է փոքր Կովկասի ամենաբարդ կառուցվածքի տարածքներից մեկը: Շրջանի տեկտոնական կառուցվածքը ձևավորվել է երկարատև ժամանակահատվածի՝ սկսած պալեոգոյից-մինչև չորրորդականը, ընթացքում: Շրջանի տեկտոնիկայի բարդությունը պայմանավորված է տարբեր հասակների ապարների զգալի ինտենսիվության տեղաբաշխմամբ, բարդեցված մի շարք խզվածքային խախտումներով:

Երկրաբանակառուցվածքային տեսակետից տարածաշրջանը հարում է միջին-ուշ ալպյան ծալքավորման Բագումի զոնայի Հանքավան-Զանգեզուրի ենթազոնայի կենտրոնական հատվածին՝ Որոտանի սինկլինորիումին, որն ընդգրկում է Որոտան գետի միջին հոսանքի ավազանը: Սինկլինորիումը կազմող տարբեր կառուցվածքային հարկերի ապարները բեկորատված են երկրորդական կարգի խզումնային խախտումներով:

Չորրորդական ժամանակում տեղի են ունեցել շրջանի առանձին հատվածների բարձրացում և իջեցում, որոնց արտացոլում են էրոզոնային և ակկումուլյատիվային դարավանդները: Բացի պլիկատիվային տեղաբաշխմանը, շրջանում զգալի տարածում են գտել նաև խզվածքային խախտումները:

Բուն երևակման երկրաբանական կառուցվածքում մասնակցում են վերին պլիոցենի նստվածքային, հրաբխածին և ժամանակակից դելյուվիալ առաջացումները: Դրա երկրաբանական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից վերև):

Վերին պլիոցեն (Իշխանասարի շերտախումբ): Այս շերտախումբի նստվածքային առաջացումները մերկանում են տեղամասի զառիթափերում և ներկայացված են դոլերի-տային բազալտներով, անդեզիտաբազալտներով, տրախիանդեզիտներով, ավազակավերով, որոնք վերին մասերում խաբամացված են: Շրջանում ունեն լայն տարածում :

Այս ապարների վրա անյունային և ազիմուտային աններդաշնակությամբ տարածվում են վերին պլիոցենի Գորիսի շերտախմբի ապարները, որոնք տեղամասում ներկայացված են բազալտային անդեզիտներով (օգտակար հանածո), տրախիանդեզիտներով, անդեզիտներով և տարածաշրջանում լայն տարածում ունեն:

Տեղամասի բազալտային անդեզիտները ներկայացված են արտավիժված ապարների միասնական՝ մեկ լավային հոսքով: Դրանց առավելագույն հզորությունը հետախուզման սահմաններում հասնում է 22.8մ, իսկ առավելագույն խորությունը՝ 25մ-ի:

Կտրվածքի վերին, մերձակերևույթային մասում բազալտային անդեզիտները խիստ ճեղքավորված ու հողմահարված են և առաջացնում են մոտ 0.35-1.35մ հզորությամբ երեսաշերտ (փուշտաշերտ):

Տեղամասի կենտրոնական հատվածը տարիներ շարունակ շահագործվել է տեղի բնակիչների կողմից, որի արդյունքում առաջացել են տեղամասի ժայռային զառիթափ մերկացումներ, որոնք տեղ-տեղ հասնում են մինչև 10մ և տեսանելի է, որ օգտակար հաստվածքն ունի հորիզոնականին մոտ տեղադրում:

Բազալտային անդեզիտների հաստվածքը խախտված է տարբեր բնույթի և համա-կարգերի մերձհորիզոնական և ուղղաձիգին մոտ ճեղքերով: Տեկտոնական ծագման ճեղքերը մեծ տարածում ունեն և հաճախ համընկնում են անջատման ճեղքերին: Ճեղքերը հաճախ լցված են կավային և կավավազային լցոնով, իսկ այդ տարաբնույթ ճեղքերի հատումներով տեղամասի օգտակար հանածոն առաջացնում է մանրաբեկորային և պրիզմանման անջատումներ: Ըստ դաշտային նախնական դիտարկումների, տեղամասի օգտակար հանածոն միատարր է, ծակոտկեն:

Տեղամասի ժամանակակից առաջացումները ներկայացված են հիմնականում փուխր-բեկորային դեյուվիալ նստվածքներով: Տեղամասում դրանց հզորությունը տատանվում է (ըստ մերկացումների տվյալների) 0.35-0.5մ սահմաններում, միջինը 0.46մ:

Դեյուվիալ նստվածքները ներկայացված են ավազակավային նյութով թույլ կապակցված փուխր-բեկորային ավազախճային, խճաբեկորային առաջացումներով:

▪ ***Նախատեսվող գործունեության բնութագիրը***

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի բազալտային անդեզիտների երևակման երկրաբանական ուսումնասիրության ներկայացվող ծրագիրը կազմվել է հաշվի առնելով տեղամասի երկրաբանական կառուցվածքը, մորֆոլոգիական ձևը, տարածքի չափերը, սումնասիրվող կոպճա-գլաքարային առաջացումների հզորությունը, դրանց հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական և երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, համաձայն «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրի նկատմամբ պաշարների դասակարգման կիրառման հրահանգի» պահանջներին համապատասխան, իչնչպես նաև համաձայն ՀՀ ՏԿԵ նախարարի 2021թ. օգոստոսի 11-ի թիվ 06-Ն հրամանով ամրագրված դրույթների: Տեղամասն ըստ երկրաբանական կառուցվածքի բարդության և երկրաբանական հայտանիշների փոփոխականության աստիճանի, վերագրվում է 1-ին խմբին:

Նկատի(ունենալով տեղամասի պարզ երկրաբանական կառուցվածքը, օգտակար հանածոյի մորֆոլոգիական ձևը և չափսերը, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների համար ընտրված տարածքի չափսերը (5.38հա), հետախուզումը նախատեսվում է իրականացնել մինչև 12-ից 25մ խորությամբ 6 հորատանցքերի, 3 մերկացումների և փորձնական բացահանքերի միջոցով:

Երկրաբանահանույթային աշխատանքներ

Տեղամասերի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզների կազմման նպատակով նախատեսվում է կատարել տոպոգրաֆիական և երկրաբանականհանույթ 5.38հա տարածքի հետախուզական փորվածքների և

նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Տոպո-մարկշեյդերական աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, Արմեն Անախասյան ԱԶ-ի կողմից:

Հորատանցքերի հորատում

Տեղամասի երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատել 6 հորատանցք՝ 12-ից 25մ խորությամբ, ընդհանուրը 117մ ծավալով, 3 հետախուզական գծերի վրա: Հորատումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից KAMA3 մակնիշի POLE-HOLE DIGGER հորատող հաստոցով կարծր համաձուլվածքային թագիկներով, 103մմ նախնական և 93մմ վերջնական տրամագծով: Օգտակար հանածոյի հորատահանուկի գծային ելքը պետք է կազմի 98%:

Ըստ ֆոնդային նյութերի տվյալների հորատման աշխատանքների նախնական ծավալները բաշխվում են հետևյալ կերպ /ըստ ֆոնդային նյութերի տվյալների/, որոնք կճտվեն հորատման աշխատանքների ավարտից և փաստագրումից հետո:

Աղյուսակ 1.

Հ/Հ	Հորատանցքի համարը	Նախագծային խորութ.,մ	Ապարների կարգը			
			IV	VI	VII	VIII
1.	Հորատանցք 1	20	0.5	1.2	17.8	0.5
2.	Հորատանցք 2	25	0.5	1.25	22.75	0.5
3.	Հորատանցք 3	25	0.5	1.35	22.8	0.35
4.	Հորատանցք 4	12	0.45	1.0	10.2	0.35
5.	Հորատանցք 5	20	0.45	1.15	18.05	0.35
6.	Հորատանցք 6	15	0.35	1.00	13.35	0.3
	Ընդամենը	117	2.75	6.95	104.95	2.35
	Միջինը տեղամասում		0.46	1.16	17.5	0.39

Հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում

Նախագծով Նախատեսվում է հորատել 6 հորատանցք, որի համար 6 անգամ կկատարվի POLE-HOLE DIGGER ինքնագնաց հորատող հաստոցի տեղակայում և ապատեղակայում:

Տեղամասում նախատեսվում է *մերկացումների փաստագրման աշխատանքներ*, ընդհանուրը 27գծ.մ ծավալով, այդ թվում 1-ին մերկացում 9.5 գծ.մ ծավալով, 2-րդ մերկացում՝ 8.5մ և 3-րդ մերկացում՝ 9 գծմ ծավալով:

Փորձնական բացահայտի անցում և ուսումնասիրություն

Նախատեսվում է կատարել փորձնական արդյունահանում բազալտային անդեզիտների զանվածից բլոկների ելքի տոկոսը որոշելու համար:

Նախատեսվում է անցնել 1 բացահանք 25մ² ընդհանուր մակերեսով, 100մ³ ծավալով, որից 11.5մ³-ը հողաբուսական շերտն է: Ընդ որում, բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտը և փուշտան կհեռացվի առանձին և կկուտակվի բացահանքի անմիջական հարևանությամբ, հետագայում կօգտագործվի ռեկուլտիվացիոն աշխատանքների համար:

Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական հարատասեպային եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր, IV և VII կարգի ամրության ապարներում:

Լեռնային փորվածքների փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերը, փորձնական բացահանքը և բնական մերկացումները:

Նախատեսվում է իրականացնել հետախուզական փորվածքների տեղադիրքի կապակցում, մակերևույթի թեքության անկյան և ազիմուտի չափում:

Կատարվելու է մերկացված ապարների ուսումնասիրություն, նմուշների վերցնում, դրանց պիտակավորում, հորատանցքերի նկարագրում՝ նմուշարկման միջակայքերի նշմամբ:

Փաստագրման աշխատանքները կկատարվեն առաջին կարգի երկրաբանի կողմից, գլխավոր մասնագետի ղեկավարությամբ:

Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով:

Այդ աշխատանքների ծավալներն են.

- հորատահանուկի փաստագրում - 117 զծ.մ
- մերկացումների փաստագրում – 27զծ.մ
- փորձնական բացահանքի փաստագրում- 8.0զծ.մ

Ընդամենը - 152զծ.մ:

Նմուշարկում

Տեղամասերի բազալտային անդեզիտների որակական հատկանիշները պարզաբանելու նպատակով նախատեսվում է հորատանցքերից, փորձնական բացահանքից, մերկացումներից կատարել նմուշարկում:

Օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հորատանցքերից նմուշարկել անընդհատ տիրույթներով նմուշներ: Աեկցիայի երկարությունը ընդունվում է 5մ, հանուկային նմուշների քանակը կկազմի 23 նմուշ:

- մենաքարերի վերցնում փորձնական բացահանքից 2 նմուշ:

- մենաքարերի վերցնում մերկացումներից՝ 3 նմուշ

- համախառը նմուշի վերցնում՝ 2 նմուշ

- քիմիական կազմը որոշելու նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ և քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով 2 նմուշ:

Ընդհանուր առմամբ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար նախատեսվում է վերցնել 30 նմուշ, այդ թվում 23 հանուկային և 5 մենաքարային նմուշ, 2 համախառը, որոնք կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների «Անալիտիկ» ՓԲԸ-ի լաբորատորիայում: Բազալտների քիմիական կազմի որոշման նպատակով նախատեսվում է վերցնել 2 նմուշ: Նախատեսվում է կատարել նաև ապարակազմական (պետրոգրաֆիական) հետազոտություններ, որի համար պետք է պատրաստվի 2 հոկուկ: Պետրոգրաֆիական և քիմիական ուսումնասիրությունները կկատարվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտում:

Հորատահանուկի նմուշարկում

Հորատումից ստացված ամբողջ հորատահանուկը ենթարկվում է նմուշարկման: Նմուշարկումը սեկցիոն է: Հորատահանուկի միջին տրամագիծը 76մմ է:

Կնմուշարկվեն հորատման ամբողջ ծավալի 98%-ը արմատական ապարներում: Հորատման ամբողջ ծավալը 5մ նմուշի միջին երկարության դեպքում կկազմի՝

$$117 \times 98\% = 114.66 \text{ գծ.մ նմուշ}, 114.66 : 5\text{մ} = 23 \text{ նմուշ}$$

Ակոսային և համախառը նմուշարկում

Մերկացումներից, փորձնական բացահանքից և հետախուզահորերից նախատեսվում է (20x20x20սմ) չափի 5 մոնոլիտ նմուշների վերցնում՝ այդ թվում 3-ը հ մերկացումներից, 2-ը բացահանքից:

Տեղամասի խիստ հողմահարված, ճեղքավորված բազալտային անդեզիտները որպես խճի հումք պարզելու համար անհրաժեշտ է վերցնել 2 համախառն նմուշ, յուրաքանչյուրը 150կգ քաշով, ընդանուրը 300կգ:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացում վերցված բոլոր նմուշները կենթարկվեն լաբորատոր հետազոտությունների: Նախատեսվում է կատարել օգտակար հանածոյի ֆիզիկամեխանիկական քիմիական, պետրոգրաֆիկական ուսումնասիրություններ:

Վերցրած 30 նմուշները (23 հանուկային, 5 մենաքարային և 2 համախառը) «Անալիտիկ» ՍՊ ընկերության լաբորատորիայում կենթարկվեն ֆիզիկամեխանիկական (լրիվ ցիկլով) փորձարկումների:

Քարաբանական և միներալոգական ուսումնասիրությունները կկատարվեն 2 հոկուկների միջոցով, քիմիական կազմը կորոշվի ըստ 2 նմուշների անալիզի տվյալների: Քիմիական և պետրոգրաֆիկական հետազոտությունները կկատարվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական ինստիտուտում:

Ինժեներաերկրաբանական և հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ

Ուսումնասիրվող տեղամասում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ երևակման տարածքի ինժեներա-երկրաբանական և հիդրոերկրա-բանական պայմանները /ջրաբեր հորիզոնների առկայությունը պարզելու համար/ պարզաբանելու համար:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել՝

- հանքավայրի ապարների կազմը,
- ապարների ճեղքավորվածությունը,
- ապարների կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան,
- պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրցեսները:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել .

- հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան ուսումնասիրել և նկարագրել դրանք,

- ուսումնասիրել ջրի որակը,

- կատարել ռեժիմային դիտարկումներ:

Դիտարկումները նախատեսվում է կատարել ամիսը մեկ անգամ:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ կպահանջվի խմելու և տեխնիկական ջուր: Խմելու ջուրը նախատեսվում է գնել Տեղ բնակավայրի առևտրի կետերից շալցված տարբերակով, իսկ տեխնիկական ջրի պահանջարկը նախատեսվում է բավարարել Տեղ գետակից :

Ռադիոմետրական ուսումնասիրություններ

Անցած փորձնական բացահիշքը, մերկացումները և հորատահանուկը պետք է ենթարկվեն ռադիոմետրական չափումների, ճառագայթահիգիենիկ հատկությունները պարզաբանելու համար СРП-6801 ռադիոմետրիական չափիչ սարքի միջոցով: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով, մասնագիտացված խմբի կողմից:

Ճանապարհների և հորատման հրապարակների

Շինարարություն

Նախատեսվում է 6 հորատման հրապարակների և դրանց մոտեցման ճանապարհների նորոգում (անհրաժեշտության դեպքում) մեխանիկական եղանակով՝ 4-րդ կարգի ապարներում: Այդ աշխատանքների ծավալները ստորաբաժանվում են՝

- Հորատման հրապարակների կառուցում

Կկառուցվի 6 հորատման հրապարակ, յուրաքանչյուրը 40մ² մակերեսով: Ընդհանուր մակերեսը կկազմի՝ 6x40=240մ²:

Հաշվի առնելով այն հանգամանքը հողաբուսական ծածկն առկա է շուրջ 65% մակերեսում /համաձայն դաշտում կատարված նախնական դիտարկումների տվյալների/ հարթակների վերականգնման ենթակա ծավալը կկազմի՝

$$40 \times 65\% \times 0.46 \times 6 = 71.76\text{մ}^3:$$

Ծրագրով նոր ճանապարհների կառուցում չի նախատեսվում, քանի որ տեղանքում կան գրունտային ճանապարհներ, որոնք բարենպաստ են և ընկերությունը կօգտվի այդ ճանապարհներից:

Եթե աշխատանքների իրականացման ժամանակ պարզվի, որ ճանապարհի որոշ հատվածներ ոչ բարենպաստ են, այդ դեպքում կկատարվի մասնակի վերանորոգում, առանց լրացուցիչ ծախսերի:

▪ ***Նախագծման նորմատիվ-իրավական հենքը***

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության,

պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

– «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

– «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– «Թափոնների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների,

ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն որոշում, որով հաստատվել են ջրակոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,
- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի,
- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ՀՀ ընդերօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը,
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի N1396-Ն որոշում, որով սահմանվել են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ.-ի N369-Ն հրաման, որով հաստատվել են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման դրույթների կիրարկման ուղեցույցները:
- ՀՀ բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի N342-Ն հրաման, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության (այդ թվում՝ ընդերքօգտագործման) և սպառման թափոնների ցանկը:
- ՀՀ առողջապահության նախարարի 19.09.2012թ.-ի N 15-Ն հրաման, որով հաստատվել են կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը:

2. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

▪ *Գտնվելու վայրը*

ՀՀ Սյունիքի մարզի Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքում նախատեսվում է իրականացնել երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ: Աշխատանքների համար ընտրված տարածքը վարչական տեսակետից ներառված է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ խոշորացված համայնքի Տեղ բնակավայրի սահմաններում:

Հետախուզվող տեղամասը գտնվում է Քարաշեն-Տեղ ավտոճանապարհի ձախ կողմում՝ Տեղ գյուղից 1.15կմ դեպի արևմուտք, Քարաշեն գյուղից շուրջ 4.7-5.0կմ հյուսիս-արևելք, Արավուս գյուղից 720մ դեպի հարավ-արևմուտք, Խնձորեսկ գյուղից 5.4կմ դեպի հյուսիս-արևելք: Տեղ բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող տարածքից 80-180մ, Արավուս գյուղի շինությունները՝ մոտ 700մ հեռավորությունների վրա (ուղիղ գծով):

Երևակման տարածքից ուղիղ գծով մոտ 0.4կմ արևելք անցնում է S-8-55 Կոռնիձոր-Տեղ-Սրավուս տեղական նշանակության ճանապարհը, իսկ մոտ 0.6կմ հարավ՝ Մ-12 Գորիս-ԼՂՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհը (նկարներ 1-3):

Տեղի երևակման մակերեսը կազմում է մոտ 5.38հա: Երևակման կենտրոնի աշխարհագրական կոորդինատներն են (ըստ Գրինվիչի)․

- հյուսիսային լայնություն – 39° 33' 21"

- արևելյան երկայնություն - 46° 27' 50":

Հայցվող տարածքի կոորդինատները ներկայացվում են ստորև (ըստ Arm WGS-84 կոորդինատային համակարգի)․

1. 4381499.37, 8625677.04

5. 4381400.30, 8626090.10

2. 4381429.26, 8625662.66

6. 4381476.30, 8625905.67

3. 4381286.25, 8625877.88

1. 4381499.37, 8625677.04

4. 4381361.25, 8626098.26

Երևակման շրջանի խոշոր բնակավայրը Գորիսն է, որի տնտեսությունը կայացել է 20-րդ դարի կեսերին՝ քաղաքի հարավային հատվածում ձևավորված արդյունաբերական հանգույցի շրջանակներում: 1948 թ. հիմնադրվել է Գորիսի տրիկոտաժի ֆաբրիկան, 1960 – 1970 թթ. Գորիսը հարստացել է արդյունաբերական մի շարք այլ ձեռնարկություններով:

Մարզկենտրոնը ԿԱՊԱՆ
7 քաղաք, 131 բնակավայր
Մարզային նշանակության
ճանապարհների երկարությունը՝ 547կմ




◆ Տեղի բազալտային անդեզիտների երևակում


22

ՄԻՆԵՐԱՏԻԿ ԻՐԱՎԻՃԱԿԱԿԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ

Կազմված է 1:25 000 մասշտաբի 1:33-21-Բ-ը տարածադրված թերթի հենքի վրա



Նկար 2.



Նկար 3.

Գործարկվել են միկրոէլեկտրաշարժիչ, ծխախոտի ֆերմենտացիոն, ռետինե կոշիկների, հացի գործարանները, արդյունաբերական և կենցաղային սպասարկման կոմբինատները, գորգագործական արտելը: Ներկայումս գործում են մի շարք ընկերություններ «Միկրոշարժիչ գործարան» ՓԲԸ, «Տրիկոտաժի ֆաբրիկա» ՓԲԸ, «Զանգեզուր կոմբինատ» ՓԲԸ, «Որոտանի ՀԷԿ» ՓԲԸ, «Գամմա» գործարանը, Սննդի կոմբինատը, «Հացի գործարան» ՓԲԸ և այլն:

▪ ***Ռելիեֆ, երկրաձևաբանություն***

Երկրաձևաբանական շրջանացման տեսակետից Տեղի բազալտային անդեզիտների երևակումը գտնվում է Սյունիքի հրաբխային բարձրավանդակի Գորիսի սարահարթի սահմաններում, Զանգեզուրի ու Արցախի լեռնաշղթաների միջև: Իրենից ներկայացնում է բլրաթմբային սարահարթ է, որի միջին բարձրությունը՝ 2800-3200 մ, առավելագույնը՝ 3594 մ (Թրասար):

Սյունիքի բարձրավանդակը տարածվում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, երկարությունը՝ 120 կմ, լայնությունը՝ մինչև 50 կմ (հյուսիսում): Մակերևույթին բնորոշ են բազմաթիվ հրաբխային կոները, կենտրոնական մասում են Ծղուկ (3581 մ) և Մեծ Իշխանասար (3550 մ) հրաբխային զանգվածները: Շատ են քարացրոնները, կան հնագույն սառցապատման հետքեր, փոքր ու փակ գոգավորություններ: Վերջիններից շատերը վերածվել են լճերի՝ Մեծ Փորակ, Փոքր Փորակ, Ալ, Սև և այլն:


Սյունիքի բարձրավանդակում հյուսիսից-արևելքում կարճ, բարձրադիր ու ծալքաբեկորավոր լեռնաճյուղերով միանում է Արցախի լեռնաշղթային: Հարավ-արևմուտքում ու հարավում լանջերը զառիթափ իջնում են դեպի Սիսիանի, Եռաբլրի, Գորիսի, Հագարիի լավային սարավանդները: Բարձրավանդակից սկիզբ են առնում Որոտան, Արփա, Հագարի, Թարթառ գետերը:

Բյուրեղային հիմքը երկրաբանական կառուցվածքի տեսանկյունից, աչքի է ընկնում բարդ մոզայիկ կառուցվածքով, առանձնանում են տարբեր կարգի տեկտոնական բլոկներ, որոնք միմյանցից բաժանված են միջբլոկային և ներբլոկային բեկվածքներով: Տեկտոնական բլոկների հիմնական մասը խորասուզված է ծովի մակարդակից ցածր մինչև մի քանի կիլոմետր: Դրանց զուգահեռ ավելի սահմանափակ ձևով հանդես են գալիս նաև ծովի մակերևույթից վեր բարձրացած բլոկներ:

Բուն Գորիսի միաթեք սարահարթի մակերևույթի բարձրությունները տատանվում են ծ.մ. 1200-2000մ սահմաններում: Սարահարթը երիզվում է Որոտան, Գորիս և Հագարի գետերի հովիտներով և կտրտված է ձորակների և կիրճերի երոզիոն ցանցով: Ջրբաժանային հատվածներին բնորոշ է թույլ բլրային դենուդացիոն մակերևույթ 5-7° թույլ անկմամբ դեպի Արաքս գետի հովիտը: Սարահարթը կտրտող ձորակներում մակերևույթի լանջերի թեքությունները հասնում են 18°-ի:


Տեղ, Խնձորեսկ, Կոռնիձոր գյուղերի հարակից հատվածներում պահպանվել են հողմահարման հին մակերևույթների մնացուկները, որոնք իրենցից ներկայացնում են լավային հոսքերով պատված հարթ մակերևույթով բարձրություններ:

Շրջանի լեռների երկրաձևաբանական, մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4-5-ում:



Նկար 4.

ՌԵԼԻԵՖԻ ԼԱՆՁԵՐԻ ԹԵՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- 1 - Մեղմաթեք լանջեր 3-9 աստիճան թեքությամբ
- 2 - Թեք լանջեր 9-18 աստիճան թեքությամբ


Նկար 5.

▪ *Սողանքներ, սեյսմիկ բնութագիր*

Տեղի երևակման տարածքում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) երևակման տարածքից մոտ 0.97կմ արևելք և 1.75կմ արևմուտք հայտնի են SIUN-021-0780 և SIUN-021-0790 սողանքային մարմինները (նկար 6):


Սողանքային մարմինների բնութագրերը ներկայացված են ստորև, աղյուսակ 2-ում:

Սողանքի կենտրոնի կոորդինատներն ու բարձրությունը							Սողանքային մարմնի չափերը		
հս. լայն.			արլ. երկ.			Բարձր. ծ.մ. (մ)			
աստ.	րոպե	վայրկ.	աստ.	րոպե	վայրկ.			լայն. (մ)	երկար. (մ)
Սողանքային մարմին SIUN-021-0780									
39	33	24	46	26	34	1527	100	100	1
Սողանքային մարմին SIUN-021-0790									
39	33	33	46	28	44	138	500	400	22



Նկար 6.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Տեղի երևակյալ տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g զրունտի հորիզոնական արագացման մեծություն (նկար 7):




Նկար 7.

- **Շրջանի կլիման**

Տեղի երևակման շրջանի կլիման չոր է, ցամաքային (նկար 8): Շրջանի կլիմայական բնութագրերը ներկայացվում են ըստ մոտակա Գորիս օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների արդյունքների: Բնութագրվում է մեղմ ձյունապատ ձմեռներով, տաք ամառներով: Արևափայլքի տարեկան տևողությունը ավելի քան 2100 ժամ է, անարև օրերի թիվը՝ 59:

Տարեկան միջին ջերմաստիճանը՝ 9.1°C, բացարձակ նվազագույնը՝ -20°C, բացարձակ առավելագույնը՝ 35°C: Տարեկան տեղումների քանակը հասնում է 744մմ:

ԿԼԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

1 - Ցամաքային չոր կլիմա

Նկար 8.

Աղյուսակ 3.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-0.5	0.0	2.9	8.5	12.6	16.2	18.9	18.6	14.7	9.9	5.5	1.7	9.1	-20	35

Աղյուսակ 4.

Օդի հարաբերական խոնավությունը

Ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժամը 15-ին	
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա	ամենաշոգ ամսվա
64	66	71	71	74	72	69	70	77	77	70	64	70	63	54

Աղյուսակ 5.

Մթնոլորտային տեղումները

Ըստ ամիսների միջին ամսական/առավելագույն օրական												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
34	44	71	91	113	91	48	39	62	64	53	34	
29	72	45	47	72	82	70	63	54	57	58	35	744
												82

Աղյուսակ 6.

Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
47	65	122

Աղյուսակ 7.

Արևափայլի տևողություն

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
132	131	141	155	191	213	226	215	184	146	126	117	1977

Աղյուսակ 8.

Անարև օրերի քանակը

Ըստ ամիսների												Տարեկան գումարային
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	
5	6	8	6	4	3	3	4	5	7	6	6	63

Աղյուսակ 9-1.

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ							
		Ուղղությունները							
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ
860.2	հունվար	3	2	2	6	9	13	20	45
		2.7	2.4	2.2	1.6	1.6	2.1	2.6	3.2
	ապրիլ	2	2	4	13	12	14	18	35
		2.3	2.2	1.8	1.6	1.7	2.0	2.3	2.5
	հուլիս	1	1	4	17	15	14	17	31
		1.4	1.4	1.6	1.7	1.6	1.6	1.6	1.6
	հոկտեմբեր	2	1	2	12	14	14	17	38
		1.9	1.9	1.8	1.7	1.6	1.9	1.9	2.2


Աղյուսակ 9-2.

Քամիներ

Ամիսներ	Անհողմությունների կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի քանակը, օր
հունվար	30	2.0	1.5	25
ապրիլ	33	1.5		
հուլիս	26	1.2		
հոկտեմբեր	35	1.3		

▪ **Մթնոլորտային օդ**


Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքում մթնոլորտային օդի մոնիթորինգ պետական լիազորված կառույցների կողմից չի իրականացվում : Երևակման շրջանում ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի աղտոտվածության մոնիթորինգ իրականացվում է Կապան քաղաքում՝ 11 դիտակետերում (նկար 9):



Նկար 9.

Ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության կայքում ներկայացված են Կապան քաղաքի մթնոլորտային օդի 2022 թվականի դիտարկումները: Համաձայն դիտարկումների՝ ծծմբի և ազոտի երկօքսիդների ՍԹԿ գերազանցումներ ս.թ. օգոստոս ամսվա դրությամբ չեն արձանագրվել (նկար 10-12) :

Երևակման տարածքում արձանագրվել է 0.08մգ/մ³ ազոտի երկօքսիդ, 0.01մգ/մ³ ծծմբի երկօքսիդ և 0.025մգ/մ³ փոշի (2022 թվականի հոկտեմբերին ընկերության կողմից պատվիրված դիտարկման տվյալներով) :




Նկար 10-11.

▪ **Ջրային ռեսուրսներ**

Տարածքի խոշորագույն ջրային երակը Հագարի գետն է, Որոտանի ձախ և ամենամեծ վտակը: Ունի 113 կմ երկարություն և 2570 կմ² ավազան: Սկիզբ է առնում Արցախի բարձրավանդակից՝ Դալիդաղ կոչվող լեռնազանգվածի հարավային լանջից: Հոսում է հյուսիս-արևմուտքից հարավ-արևելք, խոշոր վտակը Հոչազն (Հոչանց) է (63 կմ): Մնումը խառն է, հորդացումը տեղի է ունենում մայիս-հունիսին ամիսներին: Տարեկան միջին ծախսը կազմում է 16.2 մ³/վ է, հոսքը՝ 510 միլիոն մ³: Գետում ջրի նվազագույն ծախսը կազմում է 4,61մ³/վրկ, հոսքի մոդուլը՝ 3,92լ/վրկ.կմ²:

Հայցվող տարածքից հյուսիս, ուղիղ գծով 830-880մ հեռավորության վրա հոսում է Հագարի գետի Տեղ վտակը (նկար 12):



Նկար 12.


2022 թվականի դեկտեմբերի վերջին գետակից վերցվել է նմուշ, որի քիմիական վերլուծության արդյունքում արձանագրվել է պղինձ 1.3մկգ/լ, ցինկ 8.9մկգ/լ, մանգան 5.1մկգ/լ, կոբալտ 0.24մկգ/լ, երկաթ 0.095մկգ/լ, ընդհանուր ֆոսֆոր 0.12մկգ/լ:

Երևակման տարածքը կազմող ձորակի բնական կտրվածքի տեղադրման ժամանակ աղբյուրներ, ջրերի ելքեր չեն արձանագրվել: Ձորակի պատերը կազմող ապարներում խոնավության հետքեր չեն նշվել:

Երկրաբանական ուսումնասիրության ընթացքում հորատվող հորատանցքերում նախատեսված է հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների իրականացում: Աշխատանքների ավարտից հետո ընկերությունը կստանա անհրաժեշտ տեղեկատվություն տեղամասի հիդրոերկրաբանական կառուցվածքի վերաբերյալ:

▪ **Հողեր**

Տեղի բազալտային անդեզիտների երևակման շրջանում զարգացած են դարչնագույն անտառային հողերը, լվացված և սովորական սևահողերը, առանձին հատվածներում մակերևույթը կազմված է արմատական ապարների ժայռային մերկացումներով: Հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկար 13-ում):



Նկար 13.

Բուն երևակման տարածքում զարգացած են սովորական ալրակարբոնատային փոքր հզորության թույլ հողմահարված հողերը: Հետազոտության արդյունքներով, հումուսի պարունակությունը հողերում չի գերազանցել 12.2%, 100գ հողում կլանված կատիոնների գումարը՝ 31.2մ/էկվ, ջրային քաշվածքի pH-ը՝ 6.5: Հողերին բնորոշ է

կավավազային մեխանիկական կազմ, հորիզոնները տարանջատված չեն: Հողերի քիմիական կազմը հետևյալն է.

Աղյուսակ 10.

Շիկացման կորուստ	SiO ₂	Al ₂ O ₃	Fe ₂ O ₃	P ₂ O ₅	MnO	CaO	MgO	K ₂ O	SO ₃
16.85	52.67	13.4	9.01	0.14	0.10	3.1	2.21	2.3	0.22

ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանի հավելվածի աղյուսակ 1-ում նշված մետաղներից երևակման հողում արձանագրվել է պղինձ 1.01մգ/կգ, ցինկ 13.2մգ/կգ, կոբալտ չ/ն, նիկել չ/ն, սնդիկ չ/ն:

Ըստ երևակման տարածքում կատարված նախնական դիտարկումների, հողաբուսական շերտի հզորությունը տատանվում է 0.35-0.5մ սահմաններում, միջինը կազմելով 0.46մ:

Երևակման հայցվող սահմաններում՝ փոքր ձորակի սկզբնամասում առանձնացվում է մոտ 0.30հա մակերեսով խախտված տարածք (նկար 14): Դրա առաջացման պայմանների և ժամանակի մասին ընկերությունը տեղեկատվություն չունի:




Նկար 14.

Արդեն իսկ խախտված տարածքը մասամբ (25մ² չափով) օգտագործվելու է փորձնական բացահանքի անցման համար:

▪ **Բուսական և կենդանական աշխարհ**

Տեղի բազալտային անդեզիտների երևակման շրջանի բուսականության գերիշխող տեսաբլ տափաստանային հացահատիկային, տարախոտա-հացահատիկային բուսականությունն է (նկար 15):


Տեղ գետակի մերձհունային հատվածում, ձորակային ցանցի երկայնքով աճում են մասրենու, ալոճենու և մոշենու նոսրուտներ, առանձին թփեր, ուռենի:



Նկար 15.

Երևակման տարածքում նշվել են վարսակիտոտ, որոտ, տելեփ, սապնարմատ, սեզախոտ, տփիկիտոտ, սեզ, այծակն, սոխուկավոր գարի, շյուղախոտ, կարծրախոտ, անթառամ, մատուտակ, ավելուկ, հարակից ձորակում ` եզան լեզու, պայթակենի, սոնիճ, գորտնուկ, մասրենու թփեր:

Երևակման տարածքից մոտ 0.55-0.75կմ հյուսիս գտնվում են Գորիսի անտառտնտեսության Գորիսի անտառպետության տարածքներ (նկար 16): Ըստ Գորիսի անտառտնտեսության անտառկառավարման պլանի՝ դրանք պաշտպանական նշանակության անտառներ են (նկար 17) :



Նկար 16.

Գորիսի անտառտնտեսությունը կազմավորվել է 1954 թվականին՝ Անտառային տնտեսության գլխավոր վարչության կազմում Հայկական ԽՍՀ Գյուղատնտեսության նախարարության 21.07.1954թ. թիվ 237 հրամանի հիման վրա: Համաձայն վերոհիշյալ հրամանի, Կապանի անտառտնտեսությունից առանձնացվել են 11960 հեկտար անտառներ, որոնց հիման վրա կազմավորվել է Գորիսի անտառտնտեսությունը՝ երեք անտառպետություններով. Գորիսի անտառպետություն, Շուռնուխի անտառպետություն, Արծվանիկի անտառպետություն: Ներկայումս անտառպետությունների մակերեսները կազմում են համապատասխանաբար 6919հա, 5181հա և 4430հա : Բարձրությամբ:

փոքր ծառուտներ: Ցածր լեռնային գոտում անտառային բուսականությունը ներկայացված է հիմնականում ցածրաբուն կաղնու ծառուտներով, որոնց կազմում զգալի մասնակցություն ունեն սրապտուղ և սովորական հացին, վրացական ու դաշտային թխկին և այլ տեսակներ: Թփերից ավելի շատ հանդիպում են շլորենին, սզնին, մասրենին, մոշենին և այլն: Միջին բարձրություններում (1200-1400մ) գերիշխում են հիմնականում վրացական կաղնու անտառները, որոնց բնորոշ է խառը կազմ՝ բոխու, հացենու, թխկու, ինչպես նաև անտառային խնձորենու ու տանձենու մասնակցությամբ, իսկ ավելի բարձր՝ խոշորառեջ կաղնին:

ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով ուսումնասիրել է ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշումը, համաձայն ինչի Տեղի երևակման տարածաշրջանում հայտնի են.

- գազ *Բիլովայի* (*Astragalus bylowae* Elenevsky) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ, Հայաստանի էնդեմիկ, աճելավայրը գտնվում է Տեղ գյուղի շրջակայքում: Աճում է միջին լեռնային գոտում, ծ. մ. 1350 մ բարձրության վրա տափաստաններում: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում ;

- գազ *Կիրպիչնիկովի* (*Astragalus kirpicznikovii* Grossh.) – վտանգված տեսակ, Անդրկովկասի էնդեմիկ, հանդիպում է Գորիս քաղաքի և Տեղ գյուղի միջև: Աճում է ստորին և միջին լեռնային գոտիներում, ծ. մ. 650-1850 մ բարձրությունների վրա, չոր քարքարոտ լանջերին, թփուտների մեջ, գիհու նոսրանտառում, ֆրիգանանման բուսականության մեջ: Պահպանության միջոցառումներ չեն իրականացվում :

Երևակման տարածքում ՀՀ բույսերի կարմիր գրքում նշված բուսատեսակների աճելավայրերի առկայությունը ստուգելու նպատակով կատարվել են երթուղային դիտարկումներ, ինչի արդյունքում փաստվել է, որ գազ *Բիլովայի* և գազ *Կիրպիչնիկովի* տեսակները երևակման տարածքում չեն աճում:

Երևակման և դրան հարակից տարածքներում կատարվել է կենդանական աշխարհի վիզուալ դիտարկում: Նշվել են դաշտամուկ, աղվես, շնագայլ: Առկա են դաշտամկան բազմաթիվ բներ, բայց խոշոր կաթնասունների ապրելավայրեր չեն դիտարկվել: Բազմազան է միջատների ֆաունան՝ նկատվել է մորեխ, ճոխկներ, ցիկադներ, գնայուկ բզեզներ, գոմաղբաբզեզներ և ոսկե բզեզներ: Թռչուններից

դիարկվել է մոխրագույն կաքավ և դաշտային արտույտ: Հատկապես շատ են թռչունները Տեղ գետակի երևակմանը հանդիպակաց լանջին, ծառածածկ հատվածներում:

Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքում պահպանության ներքո գտնվող կենդանական տեսակների առկայությունը պարզելու նպատակով կատարվել է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների վերլուծություն: Համաձայն է ՀՀ կենդանիների կարմիր գրքի տվյալների,

Տեղ գյուղին հարակից տարածքներում, անտառապատ լանջերին և լեռնային գետակների կիրճերում բնակվում է Բեխշտեյնի գիշերաչղջիկը (*Myotis bechsteinii* Kuhl): Խոցելի կենդանական տեսակ է, որի համար վտանգման հիմնական գործոն են հանդիսանում անտառահատումները և թունաքիմիկատներով անտառների մշակումը: Ապրում են անհատորեն կամ փոքր խմբերով՝ առավելապես ծառերի փչակներում, կամ կեղևի տակ, երբեմն՝ բնակելի շինությունների, ցախատների և գերանածածկ անասնագոմերի տանիքների տակ: Ակտիվ են օրվա մթնշաղին: Կերը բոնում են՝ թռչելով ծառերի կամ ջրավազանների վրայով: Հազվադեպ, քիչ ուսումնասիրված տեսակ է: Թվաքանակը և պոպուլյացիաների սահմաններն ուսումնասիրված չեն:

Հայաստանում առաջին անգամ տեսակը նկարագրվել է 2003թ.-ին Սյունիքի մարզի հյուսիս-արևելքում (Գորիսի շրջան, գգ. Խնձորեսկ, Տեղ և Կոռնիձոր), իսկ 2004 թ.-ին՝ Լեռնային Ղարաբաղին սահմանակից գյուղերում:

Տեսակի պահպանության միջոցառումներ պետության կողմից չեն իրականացվում:

Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքը անտառագուրկ է, ծածկված է սակավ տափաստանային բուսականությամբ, չի կարող հանդիսանալ Բեխշտեյնի գիշերաչղջիկի համար բնորոշ ապրելավայր:

▪ **Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ**

Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքը չի հանդիսանում բնության հատուկ պահպանվող տարածք: Մոտակա բնության հատուկ պահպանվող տարածքը՝ Գորիսի պետական արգելավայրը գտնվում է ավելի քան 20կմ հեռավորության վրա (ուղիղ գծով): Արգելավայրը ստեղծվել է ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1972 թ. նոյեմբերի 6-ի N 775 կարգադրությամբ անտառային լանդշաֆտների ու դրանց բնորոշ կենդանական աշխարհի պահպանություն նպատակով:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ: ՀՀ Սյունիքի մարզում հաշվառված բնության հուշարձանների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը ներկայացված է աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11.

Հուշարձանի անվանումը	Գտնվելու վայրը
1	2
«Սատանա» բնական քանդակ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքից մոտ 1,0 կմ հս-արլ, Գորիս-Ստեփանակերտ խճուղու ձախ կողմում
«Անանուն» ժայռ-մնացուկներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի շրջակայքում
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքի հս-արլ եզրին
«Անանուն» ռելիեֆի փոքր ձևեր	Սյունիքի մարզ, Քաջարանի հանքային ջրի աղբյուրից հս-արլ, Ողջի գետի ձախ ափին
«Մալնի ինտրուզիա» ներժայթուկ	Սյունիքի մարզ, Մեղրիի ենթատարածք, Ալվանք գյուղից մոտ 1-1,5 կմ հս, լքված Մալն գյուղի մոտ
«Անանուն» ապարների մերկացումներ	Սյունիքի մարզ, Երևան-Սիսիան խճուղու 180-181 կմ-ի ձախ և աջ կողմերում
«Խորձոր» V-աձև կիրճ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 1.5-2.0 կմ հս-արլ
«Անանուն» երոզիոն ռելիեֆ	Սյունիքի մարզ, Խնածախ գյուղից 2,5 կմ հս-արլ, Բերձոր տանող ճանապարհի ձախ կողմում
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Հալիձոր գյուղից 2 կմ արմ, Որոտանի կիրճում
«Անանուն» ապլիտային դայկաներ	Սյունիքի մարզ, Կապան քաղաքից 30-35 կմ հվ
«Հերթ» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Սիսիան քաղաքից 3 կմ հս-արմ, «Շաքի» ջրվեժի մոտ
«Փղի ճտեր» որմնաքանդակ	Սյունիքի մարզ, Կապան ք-ից մոտ 25 կմ հվ, «Շիկահող» պետարգելոց տանող ճանապարհին

1	2
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Անանուն» սյունաձև բազալտներ	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին
«Շիշքար» (Բաղաքար) դայկա	Սյունիքի մարզ, Բաղաքար գետի աջ և ձախ կողմերում
«Անանուն» բուրգանման մնացուկներ	Սյունիքի մարզ, Վերիշեն գյուղից 2 կմ հս, Գորիս-Խոզնավար ճանապարհի ձախ կողմում
«Սատանի կամուրջ» կամուրջ	Սյունիքի մարզ, Տաթև գյուղից 2,5 կմ հս-արլ
«Բնական թունել»	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի մոտ, Գորիս-Կապան խճուղու վրա
«Ագարակի» բրածո ֆլորա	Սյունիքի մարզ, Ագարակ քաղաք
«Շամբի» բրածո ֆլորա և ֆաունա	Սյունիքի մարզ, Շամբ գյուղից 500 մ հս-արմ, Որոտան գետի ձախ ափին, 1300 մ բարձրության վրա
«Ծաղկարի» լիճ	Սյունիքի մարզ, Զանգեզուրի լեռնաշղթայի կատարային հատվածում, Ծաղկարի գետի վերնամասում, Քաջարան քաղաքից մոտ 10 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3271,5 մ բարձրության վրա
«Կապուտան» (Գոգի) լիճ	Սյունիքի մարզ, Քաջարան գետի ակունքներում, Քաջարան քաղաքից մոտ 5-6 կմ հվ-արմ, ծ.մ-ից 3202 մ բարձրության վրա
«Անտակ» լիճ	Սյունիքի մարզ, Բոնակոթ գյուղի Զարդով ջրամբարից 1 կմ հս-արմ
«Գազանա» լիճ	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի ակունքներում, Գեղի գյուղից մոտ 9 կմ հս-արլ, ծ.մ-ից 3111,8 մ բարձրության վրա
«Կապույտ» լիճ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ակունքներում, Լիճք գյուղից մոտ 8 կմ հս-արմ
«Բերդալիճ» լիճ	Սյունիքի մարզ, Ծղուկ գյուղից 13 կմ հս-արլ, ծ.մ-ից 3005, 7 մ բարձրության վրա
«Կապուտջուղ» ջրվեժներ	Սյունիքի մարզ, Քաջարան քաղաքից 3.0 կմ արմ, Կապուտջուղ գետակի վրա
«Շինուհայր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախ կողմում, Հին Շինուհայրից 0.5 կմ հս-արմ
«Աղվան» ջրվեժ	Սյունիքի մարզ, Մեղրի գետի ձախ վտակ Մալն գետակի, լքված Մալն գյուղից 2.0 կմ հվ-արլ
«Վարդանիձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Վարդանիձոր գյուղից 2.5 կմ հս-արմ, Բերդաքար գետի Վարդանիձոր վտակի վրա
«Աջիբաջ» ջրվեժ	Սյունիքի մարզ, Գեղի գետի ձախակողմյան Աջիբաջ վտակի վրա, համանուն գյուղից 4 կմ հս-արմ
«Շաքի» ջրվեժ	Սյունիքի մարզ, Որոտան գետի ձախակողմյան Շաքի վտակի վրա

1	2
«Պառավաձոր» ջրվեժ	Սյունիքի մարզ, Բերդաքար գետի ձախակողմյան վտակի վրա, Վարդանիձոր գյուղից 3 կմ հս-արմ
Սբ. Վարդան եկեղեցու քարայր կացարանի և աղբյուրի համալիր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 0.5 կմ արմ, Անգեղակոթ-Շաղաթ ճանապարհից աջ
Արծվանիկ գյուղի բնական քարանձավներ	Սյունիքի մարզ, Արծվանիկ գյուղից 3 կմ հվ, Երիցավանքի շրջակայքում
«Որոտան» բնապատմական համալիր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հվ-արմ եզրին աջ ու ձախ ափերին
Հին Գորիսի («Կյորես») հրաբխային ապարներ	Սյունիքի մարզ, Գորիս քաղաքի արլ մասում, Վարարակ գետի ձախ ափին
«Մեղրիի սոսի»	Սյունիքի մարզ, քաղ. Մեղրի
«Շիբլյակ»	Սյունիքի մարզ, Կապան քաղաք, Առաջաձոր տեղամասում, 800-900 մ բարձրության վրա
«Սֆագնումային մամուռներ»	Սյունիքի մարզ, Գոռայք գյուղից 5-6 կմ հս, Որոտանի լեռնանցքի մոտ
«Զրաղացի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հվ-արմ մասում, ծ.մ-ից 1770 մ բարձրության վրա
«Ծործոր» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 4 կմ հեռավորության վրա, Ծործոր գետի աջ ափին, ծ.մ-ից 1650 մ բարձրության վրա
«Վարդանաձորի» աղբյուրներ	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից 17 կմ հվ-արմ, Սիսիան-Նախիջևան ավտոճանապարհից 160 մ ներքև
«Սմբուլի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղից հվ-արլ մասում, ծ.մ-ից 1740 մ բարձրության վրա
«Անապատի» աղբյուր	Սյունիքի մարզ, Անգեղակոթ գյուղի հարավային ծայրամասում, ծ.մ-ից 1840 մ բարձրության վրա
«Զրաղացի» աղբյուր	Սյունիքի մարզ, Բարձրավան գյուղից 0.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա
«Սևջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Գեղի գյուղի հս ծայրամասում, Գեղի գետի ձախ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1600 մ բարձրության վրա
«Արքայից» աղբյուր	Սյունիքի մարզ, Դավիթ Բեկ գյուղի հս ծայրամասում, Քաշունի գետի կիրճի աջ ափին, ջրաղացի և կամրջի միջև, ծ.մ-ից 1065 մ բարձրության վրա
«Քյահրիզ» աղբյուր	Սյունիքի մարզ, Նոնաձոր գյուղից 1.5 կմ հս-արլ, ծ.մ-ից 670 մ բարձրության վրա
«Անանուն» աղբյուր	Սյունիքի մարզ, Շաքի գյուղի հս-արմ ծայրամասում, ծ.մ-ից 1685 մ բարձրության վրա
«Մեծ Նավի» աղբյուր	Սյունիքի մարզ, Շինուհայր գյուղից 0.5 կմ հս-արմ, Ճամիկեզրին, խաչքարի մոտ

1	2
«Որոտան» աղբյուր	Սյունիքի մարզ, Որոտան գյուղի հս ծայրամասում
«Կաթնաղբյուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձավեր գյուղի հվ-արմ ծայրամասում, անտառի եզրին, Քաշունի գետի աջ ափին, ծ.մ-ից 1570 մ բարձրության վրա
«Սպիտակջուր» աղբյուր	Սյունիքի մարզ, Տանձատափ գյուղից 1.4 կմ հվ, անանուն գետակի ձախ ափին, ծ.մ-ից 1480 մ բարձրության վրա
«Շռան» աղբյուր	Սյունիքի մարզ, Քաշունի գյուղից 1.2 կմ հվ-արլ, ծ.մ-ից 1930 մ բարձրության վրա
«Ներքին» աղբյուր	Սյունիքի մարզ, Քարահունջ գյուղի հվ մասում, սողանքի մարմնի աջ կողմում, ծ.մ-ից 1250 մ բարձրության վրա

Երևակման տարածքում բնության հուշարձաններ չկան:

Ամենամոտ գտնվող բնության հուշարձաններն են «Խորձոր» V-աձև կիրճ, «Անանուն» երոզիոն ռելիեֆը և «Սատանա» բնական քանսդակը, դրանք գտնվում են Երևակման տարածքից մոտ 7.5կմ, 8.5կմ և 9.4կմ հեռավորությունների վրա (ուղիղ գծով):

3. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

- **Ենթակառուցվածքներ**

Տեղի բազալտային անդեզիտների երևակման հայցվող տարածքը վարչական առումով գտնվում է ՀՀ Սյունիքի մարզում:

Սյունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հարավում: Մարզը հյուսիսից սահմանակից է Վայոց ձորի մարզին, հարավից՝ պետական սահմանով սահմանակից է Իրանին (սահմանի երկարությունը 42 կմ է), արևմուտքից՝ Նախիջևանին և արևելքից՝ Արցախին: Սյունիքի մարզը զբաղեցնում է Զանգեզուր բնաշխարհի տարածքը, որը ներառում է Որոտան, Ողջի գետերի վերին ու միջին հոսանքների ավազանը և Զանգեզուրի՝ Մեծ Կովկասից հետո Հարավային Կովկասում ամենաբարձր լեռնաշղթայի, արևելյան լանջերը: Մարզի ամենաբարձր լեռնագագաթը Կապուտջուղն է (3 906 մ), իսկ ամենացածր վայրը՝ Մեղրու կիրճը (Արաքսի հովիտ 380մ): Ծովի մակերևույթից 3 250 մ բարձրության վրա՝ Կապույտ լճից սկիզբ է առնում Մեղրի գետը, իսկ Կապուտջուղ լեռան հալոցքաջրերից՝ Կապուտջուղ գետը, որի հետ Քաջարանց գետի միահյուսումից կազմավորվում է Ողջի գետը:

Սյունիքի մարզը, գրավելով ռազմավարական և աշխարհաքաղաքական նշանակության կարևոր դիրք, ունենալով բնահումքային հարուստ պաշարներ, արտադրական մեծ ներուժ և հանդիսանալով հանրապետության ամենախոշոր վարչական ու տնտեսական մարզերից մեկը, միաժամանակ մնում է համեմատաբար քիչ բնակեցված և տնտեսապես թույլ յուրացված, ինչը մասամբ պայմանավորված է մայրաքաղաքից ունեցած մեծ հեռավորությամբ և տրանսպորտային հաղորդակցության այլընտրանքային միջոցների բացակայությամբ:

Օգտակար հանածոներով ամենահարուստ մարզն է: Դրանցից կարևորագույններն են՝ 17 գունավոր (պղինձ, մոլիբդեն, ցինկ և այլ գունավոր) և թանկարժեք (ոսկի, արծաթ) մետաղների հանքաքարերը, ինչպես նաև ոչ մետաղային օգտակար հանածոների մի ամբողջ շարք (շինարարական և երեսապատման քարեր, բազալտային հումք, կրաքարի և այրվող թերթաքարերի, մարմարի, գրանիտի, պերլիտի և դիատոմիտների պաշարներ): Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներն են:

Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղը հանքարդյունաբերությունն է, սննդամթերքի և էլեկտրաէներգիայի արտադրությունը: Մարզում արտադրվող էլեկտրաէներգիայի գերակշիռ մասը բաժին է ընկնում Որոտանի ՀԷԿ-ի կասկադին: Գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է բուսաբուծության (մասնավորապես՝ հացահատիկային մշակաբույսերի և կարտոֆիլի արտադրություն) և անասնաբուծության (մասնավորապես՝ խոշոր և մանր եղջերավոր կենդանիների բուծում) մեջ:

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային և էլեկտրատրանս-պորտով (ճոպանուղի): Մարզի տարածքով է անցնում Հայաստանի Իրանի Իսլամական Հանրապետության հետ կապող ավտոմայրուղին, որն էական դեր ունի մարզի տնտեսության զարգացման գործում: 2008թ. շահագործման է հանձնվել «Կապան-Ծավ-Մեղրի» ռազմավարական նշանակություն ունեցող ավտոմայրուղին, որը, որպես այլընտրանք «Կապան-Քաջարան-Մեղրի» միջպետական ճանապարհին՝ տեխնիկական ցուցանիշներով գերազանցում է վերջինիս: Մարզով են անցնում Արցախը Հայաստանին կապող կարևոր ավտոմայրուղին և Իրանի Իսլամական Հանրապետությունը ցամաքային անմիջական կապով Հայաստանին կապող միակ ճանապարհը:

Կապան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 41.5 հազ. մարդ) գտնվում է Խուստուփ լեռան ստորոտում (3201 մ), Երևանից 301 կմ հեռավորության վրա: Տնտեսության առաջատար ոլորտն արդյունաբերությունն է, ընդհանուր ծավալում գերակշռողը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույններն են գունավոր և ազնիվ մետաղների արդյունահանումը: Որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև մշակող արդյունաբերությունը (սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների ոչ մետաղական հանքային արտադրատեսակների, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների, կահույքի և էլեկտրական արտադրության) և էլեկտրաէներգիայի արտադրությունը:

Քաջարան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 6.8 հազ. մարդ), գտնվում է Երևանից 326 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 25 կմ:

ՀՀ գունավոր մետալուրգիայի կենտրոնն է՝ պղնձի և մոլիբդենի հզոր հումքային բազա հանդիսացող հազվագյուտ հանքավայրի շահագործման հիման վրա: Տնտեսության հիմնական և առաջատար ճյուղը հանքարդյունաբերությունն է:

Քաղաքի տնտեսության մեջ իր բաժինն ունի նաև մշակող արդյունաբերությունը, որում 18 առանձնանում են սննդամթերքի և պատ-րաստի մետաղե արտադրատեսակների արտադրությունը:

Գորիս քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 19.7 հազ. մարդ), գտնվում է Երևանից 236 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 65 կմ, տնտեսության հիմնական ճյուղն արդյունաբերությունն է: Հիմնականում զարգացած են էլեկտրաէներգիայի արտադրությունը, սննդամթերքի, մանածագործական արտադրատեսակների, կարի, ալյումինե և մետաղապլաստիկ իրերի, բնափայտի մշակման ու փայտե արտադրատեսակների և էլեկտրասարքավորանքի արտադրությունները:

Միսիան քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 14.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 201 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 110 կմ, տնտեսության ծավալում գերակշռողն էլեկտրաէներգիայի արտադրությունն է, որոշակի տեսակարար կշիռ ունեն նաև այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների և սննդամթերքի արտադրությունները:

Դաստակերտ քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 0.3 հազ. մարդ), գտնվում է Երևանից 221 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 130 կմ: Աշխատանքներ են տարվում պղնձի և մոլիբդենի հանքերը վերագործարկելու համար:

Մեղրի քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 4.2 հազ. մարդ), գտնվում է Երևանից 376 կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 75 կմ, տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողը մշակող արդյունաբերությունն է: Որոշակի տեսակարար կշիռ ունեն էլեկտրաէներգիայի և մրգերի պահածոների ու հյութերի արտադրությունը:

Ագարակ քաղաքը (2022թ. տարեսկզբին՝ 3.9 հազ. մարդ), գտնվում է Երևանից 388կմ հեռավորության վրա, մարզկենտրոնից՝ 87կմ, տնտեսության առաջատար ոլորտը հանքարդյունաբերությունն է, որից կարևորագույնը գունավոր մետաղների արդյունահանումն է: Քաղաքի տնտեսության զարգացումը կապված է պղնձամոլիբդենային արտադրության հետ: Ագարակում են գտնվում Հայաստան-Իրան սահմանային մաքսակետերը:

2022 թվականի հունվարի 1-ի դրությամբ Սյունիքի մարզի ամբողջ բնակչությունը կազմել է 134.7հազ.մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 90.0հազ.մարդ, գյուղականը՝ 44.0հազ.մարդ:

Արդյունաբերական արտադրանքը կազմել է 537227.0մլն.դրամ, արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը՝ 107.1%: Ըստ արդյունաբերական արտադրանքի ծավալը ըստ արտադրության բաժինների ներկայացված է հետևյալ կերպ. հանքագործական արդյունաբերություն – 463579.4մլն.դրամ, մշակող արդյունաբերություն – 38936.1մլն.դրամ, էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում – 33493.4մլն.դրամ, ջրամատակարարում, կոյուղի և թափոնների կառավարում և վերամշակում – 1218.1մլն.դրամ:

Գյուղատնտեսական համախառն արտադրանքում բուսաբուծությունը կազմում է 16.4մլն.դրամ, անասնաբուծությունը՝ 43.1մլն.դրամ:

Հացահատիկային և հատիկալնդեղենային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 13815հա, բերքատվությունը՝ 15.6g/հա, համախառն բերքը՝ 21.8հազ.տոննա:

Կարտոֆիլի ցանքսատարածությունները կազմել են 1004հա, բերքատվությունը՝ 122.0g/հա, համախառն բերքը՝ 12.3հազ.տոննա:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքսատարածությունները կազմել են 526հա, բերքատվությունը՝ 98.3g/հա, համախառն բերքը՝ 5.2հազ.տոննա, բոստանային կուլտուրաների համար համապատասխանաբար՝ 12հա, 181.5g/հա, 0.2հազ.տ:

Պտղի և հատապտղի տնկարկների համար այդ ցուցանիշները կազմում են համապատասխանաբար 2636հա, 45.4g/հա և 11.8հազ.տոննա, խաղողի տնկարկների համար՝ 180հա, 29.5g/հա և 0.5հազ.տոննա:

Խոշոր եղջերավոր անասունների քանակը կազմել է 42.3հազ.գլուխ, որից կովերինը՝ 19.7հազ.գլուխ, խոզերինը՝ 13.0հազ.գլուխ, ոչխարներ և այծեր՝ 77.9հազ.գլուխ, ձիեր՝ 2.1հազ.գլուխ:

Մանրածախ առևտրի շրջանառությունը կազմել է 31639.2մլն.դրամ, ծառայությունների ծավալը՝ 27635.1մլն.դրամ, կացության և հանրային սննդի օբյեկտների շրջանառությունը՝ 2273.5մլն.դրամ, առողջապահությունն ու բնակչության սոցիալական սպասարկումը՝ 828.0մլն.դրամ, ֆինանսական և ապահովագրական գործունեությունը՝ 18296.6մլն.դրամ:

Գործազուրկների թիվը կազմել է 6.7հազ.մարդ, որից կանայք՝ 6.0հազ.մարդ: Մարզում միջին ամսական անվանական աշխատավարձը եղել է 293155դրամ:

Կենսաթոշակառուների գրանցված քանակը՝ 22818 մարդ, կենսաթոշակի միջին չափը՝ 45965դրամ:

Նախադպրոցական հաստատությունների քանակը կազմել է 55, հաճախող երեխաների քանակը՝ 4406, մանկավարժների քանակը՝ 472, մեկ մանկավարժին ընկնող երեխաների թվաքանակը՝ 9.3:

2021/2022 ուսումնական տարում Սյունիքի մարզում գործել է 117 հանրակրթական դպրոց, աշակերտների թվաքանակը 17590, մանկավարժների թվաքանակը՝ 1589, մեկ մանկավարժին ընկնող աշակերտների թվաքանակը՝ 11.1:

Երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցների, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների քանակը 2021/2022 ուսումնական տարում կազմել է 15, աշակերտների թվաքանակը՝ 2611:

Գործել են նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական 5 հաստատություններ, դրանցում կրթվել են 367սան, աշխատել են 61 մանկավարժ:

Միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների քանակը կազմել է 8, ուսանողների թվաքանակը՝ 1156, մանկավարժների թվաքանակը՝ 259, ուսանողների թվաքանակը մեկ մանկավարժի հաշվով՝ 4.5:

Սյունիքի մարզում գործում է երկու բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ կրթություն են ստանում 1433 ուսանող և աշխատում են 196 հոգի պրոֆեսորադասախոսական անձնակազմ:

Գործում են 2 թատրոն, 4 թանգարան և 81 գրադարան: 11 մարզական կազմակերպություններում մարզվում են 1718 մարզիկ:

▪ ***Հողերի տնտեսական յուրացման բնութագիր***


Հայցվող տարածքը ներառված է Տեղ խոշորացված համայնքի Տեղ բնակավայրի վարչական տարածքում:

Տեղ խոշորացված համայնքը ձևավորվել է 2016թ-ի սեպտեմբերին: Համայնքի մեջ ընդգրկված են 7 բնակավայրեր: Համայնքի կենտրոնը Տեղ բնակավայրն է:


Այն ընգրկում է Տեղ, Արավուս, Խնածախ, Խոզնավար, Կոռնիձոր, Վաղատուր և Քարաշեն գյուղական բնակավայրերը:

Ստորև աղյուսակներում և գծանկարներում արտացոլված են համայնքի սոցիալ-տնտեսական վիճակը ներկայացնող տեղեկություններ:

Բնակավայրի անվանումը	Համայնքային հողերը	Ընդհանուր բնակիչների թիվը	Հեռավորությունը Գորիսից
Արավուս	443 հա	180	22 կմ
Խնածախ	3237 հա	758	31 կմ
Խոզնավար	2121 հա	300	45 կմ
Կորնիձոր	2417 հա	1053	25 կմ
Վաղատուր	2275 հա	408	37 կմ
Տեղ	3867 հա	2189	20 կմ
Քարաշեն	1370 հա	531	16 կմ
Ընդհանուր	15730 հա	5419	-



Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.

Աղյուսակ 13.

Հիմնական գյուղատնտեսական արտադրանքի ծավալները

Բնակավայր	Արտադրանք	Ծավալը (տարեկան)
1	2	3
Արավուս	Ցորեն	4830g
	Գարի	1040g
	Հաճար	500g
Խնածախ	Ցորեն	3300g
	Գարի	2765g
	Հաճար	2250g
	Լոբի	80g
Խոզնավար	Ցորեն	750g
	Եգիպտացորեն	750g
	Լոբի	80g
Կոռնիձոր	Ցորեն	26250g
	Գարի	6760g
	Հաճար	1375g
	Լոբի	170g
	Լոլիկ	719g
	Վարունգ	318g
	Սոխ	946g
	Սխտոր	342g
	Կարտոֆիլ	4966g

1	2	3
Վաղատուր	Կարտոֆիլ	4011g
	Լոբի	80g
Տեղ	Ցորեն	40410g
	Գարի	10250g
	Հաճար	2225g
	Լոբի	150g
	Լոլիկ	822g
	Վարունգ	367g
	Սոխ	172g
	Սխտոր	940g
	Կարտոֆիլ	8404g
	Ցորեն	10500g
Քարաշեն	Գարի	2185g
	Հաճար	1875g
	Սխտոր	428g

Աղյուսակ 14.

Ծառայության ոլորտի ձեռնարկություններ

Բնակավայր	Ձեռնարկություն	Աշխատակիցների քանակը
Տեղ	Խանութ	1
	Խանութ	3
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	2
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Դեղատուն	1
	Ալրադաց	2
	Լավաշի թոնիր	4
	Տաքսի ծառայություն	5
	Տաքսի ծառայություն	4
	Տաքսի ծառայություն	4
	Գազալցակայան	8
	Հացի փուռ	2
	Բենզալցակայան	2
	Բենզալցակայան	2
Քարաշեն	Խանութ	1
	Կաթի վերամշակման գործ.	4
	Կաթի վերամշակման գործ.	5
	Գազալցակայան	8

1	2	3
Վաղատուր	Կաթի վերամշակման գործ.	2
	Խանութ	1
Խոզնավար	Խանութ	1
Խնածախ	Հացի փուռ	1
	Կաթի վերամշակման գործ.	3
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
	Կրպակ	1
Կոռնիձոր	Կաթի վերամշակման գործ.	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1
	Խանութ	1

Աղյուսակ 15.

Կրթական հաստատություններ

Անվանում	Նախատեսված է _____ հոգու համար	Ընդգրկված է _____ հոգի
Տեղի թիվ 1 միջնակարգ դպրոց	320	205
Տեղի թիվ 2 միջնակարգ դպրոց	320	139
Քարաշենի միջնակարգ դպրոց	112	73
Կոռնիձորի միջնակարգ դպրոց	220	128
Վաղատուրի միջնակարգ դպրոց	180	41
Խոզնավարի միջնակարգ դպրոց	120	39
Արավուսի տարրական դպրոց	120	7
Տեղի թիվ 1 նախադպրոցական հաստատություն	120	45
Կոռնիձորի նախադպրոցական հաստատություն	30	31
Տեղի արտադպրոցական պարի խմբակ	-	37

Աղյուսակ 16.

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ

Արավուս	Խնածախ	Խոզնավար	Կոռնիձոր	Վաղատուր	Տեղ	Քարաշեն
12	13	8	37	52	78	15

Տեղ բազմաբնակավայր համայնքի եկամուտների զգալի մասը (շուրջ 73%) ձևավորվում է պետական բյուջեից համայնքին տրամադրվող ամենամյա դոտացիաներից: Ուստի համայնքի եկամուտների փոփոխությունը մեծապես պայմանավորված է նշված դոտացիայի չափից:

Բազալտային անդեզիտների երկրաբանական ուսումնասիրության նպատակով հայցվող տարածքը ներկայացված է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողերով:

Օգտակար հանածոյի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների վերաբերյալ տվյալները և շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը ներկայացվել են համայնքի բնակիչներին, քննարկվել է ծրագրավորվող աշխատանքներում բնակիչների ներգրավման, ինչպես նաև համայնքին սոցիալական աջակցության ծրագրերի իրականացման հարցը:

▪ **Պատմության, մշակութային հուշարձաններ**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով՝ գնահատման և փորձաքննության գործընթացում դիտարկվող օբյեկտների թվին են պատկանում պատմության և մշակույթի հուշարձանները:

ՀՀ Սյունիքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատվել է ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2322-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով:

Տեղ բնակավայրի տարածքում հաշվառված են հետևյալ պատմության և մշակութային հուշարձանները.

Աղյուսակ 17.

Համարը, ենթահամարը		Անվանումը	Ժամանակը	Գտնվելու վայրը
1	2	3	4	5
1		ԱՂԲՅՈՒՐ	1815 թ.	հին կամրջի մոտ, գետակի աջ ափին
2		ԱՂԲՅՈՒՐ «ՇՈՌ- ՋՈՒՐ»	15-17 դդ.	գյուղի Սբ. Գևորգ եկեղեցուց 200 մ հվ-ամ, ձորում
3		ԱՄՐՈՅ «ՔԱՐԱԿԱԼ»	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 4.75 կմ ան
	3.1	Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	
4		ԲՆԱԿԵԼԻ ՀԱՄԱԼԻՐ «ՄԵԼԻՔ - ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆՆԵՐԻ ԱՍՏՐԱԹ»	1783 թ.	գյուղի մեջ, Սբ. Գևորգ եկեղեցու մոտ

1	2	3	4	5
5		ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ «ՔԱՐԵ ՕԹԱԽ»	14-15 դդ.	գյուղի մեջ, եկեղեցու մոտ
6		ԲՆԱԿԵԼԻ ՔԱՐԱՅՐ	17-18 դդ.	գյուղից մոտ 5 կմ հս-ան, ջրաղացի մոտ
7		ԳԵՐԵԶՍԱՆՈՅ	10-20 դդ.	գյուղի մեջ
8		ԳՅՈՒՂԱՏԵՂԻ	17-18 դդ.	գյուղի ան եզրին
	8.1	Բնակելի քարայրեր	17-18 դդ.	գյուղատեղիի ան եզրին
	8.2	Ձիթհան	17-18 դդ.	գյուղատեղիի ան եզրին
9		ԴԱՄԲԱՐԱՆ	13 դ.	
10		ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 750 մ հս-ան, «Կարմիր հող» վայրում
11		ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԳԵՎՈՐԳ.	4-5 դդ., 1737 թ.	գյուղի մեջ
	11.1	Գերեզմանոց	10-19 դդ.	գյուղի մեջ, Սբ. Գևորգ եկեղեցու շուրջը
	11.2	Պարիսպ	14-15 դդ.	եկեղեցու շուրջը
12		ԵԿԵՂԵՑԻ «ԿՈՏՐԱԾ ԵՂՑԻ»	14-15 դդ.	գյուղից մոտ 4 կմ հվ-ան, բլրալանջին
	12.1	Գերեզմանոց	միջնադար	եկեղեցու շուրջը
13		ԵԿԵՂԵՑԻ «ՍՈՒԵՂՑԻ»	5-6 դդ.	գյուղից 3 կմ հվ-ան, բարձրադիր վայրում
	13.1	Գերեզմանոց	միջնադար	եկեղեցու շուրջը
14		ԽԱՉՔԱՐ	1273 թ.	Տեղ-Արավուս ճանապարհից ձախ, սոճիների պուրակում
15		ԿԱՄՈՒՐՋ	16-17 դդ.	գյուղից 4-5 կմ հվ-ան
16		ԿԱՄՈՒՐՋ	18-19 դդ.	Սբ. Գևորգ եկեղեցուց 100 մ հվ-ան, ձորում
17		ՋՐԱՂԱՅ	19 դ.	գյուղից մոտ 4 կմ հս-ան
18		ՋՐԱՂԱՅ	19 դ.	գյուղից մոտ 5.5 կմ հս-ան

Պատմամշակութային հուշարձանները գտնվում են Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքից 0.46-6.3կմ հեռավորությունների վրա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տեղի բազալտային անդեզիտների երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նախնական նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Երկրաբանահետախուզական աշխատանքների հետևանքով օդային միջավայր է թափանցում որոշ քանակությամբ փոշի, որը կապված է հորատման աշխատանքների և ավտոտրանսպորտի տեղաշարժի անցման հետ:

Նախնական գնահատականներով տարեկան կտրվածքով առաջանալու է առավելագույնը 0.0012տ փոշի : Աշխատանքները սպասարկող բեռնատար մեքենայի աշխատանքից արտանետվելու է 0.0000028մլգ/վրկ ածխածնի օքսիդ, 0.0000014մլգ/վրկ ազոտի երկօքսիդ և 0.00049մլգ/վրկ մուր :

Ջրային ավազան. Երևակման տարածքում ջրային հոսքեր չկան : Տեղ գետակը հոսում է հայցվող տարածքից 0.83-0.88կմ հեռավորությունների վրա, հետևաբար որևէ տեսակի աղտոտում բնական ջրային հոսքի վրա չի դրսևորվելու:

Կենցաղային կեղտաջրերը նախատեսվում է կուտակել բետոնապատ անթափանց հորում, որը աշխատանքների ավարտից հետո կդատարկվի հատուկ ծառայության ուժերով:

Աշխատանքների ընթացքում խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը կկազմի մոտ 12.4մ³/տարի: Խմելու ջուրը նախատեսվում է գնել Տեղ բնակավայրի առևտրի կետերից շալցված տարբերակով և տեղափոխել աշխատանքների վայր ընկերության մեքենայով :

Տեխնիկական ջուր (ընդհանուր մոտ 230խ.մ. քանակությամբ) պահանջվում է չորային եղանակներին հորատման հարթակների (240մ²), փորձնական բացահանքի (25մ²) տարածքի և մոտեցնող ճանապարհի (700մ²) խոնավեցման համար :

Տեխնիկական ջրի պահանջարկը նախատեսվում է բավարարել Տեղ գետակից, ջրօգտագործում իրականացնելու նպատակով ընդերքօգտագործման թույլտվությունը ստանալուց հետո ընկերությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն կներկայացնի համապատասխան դիմում :

Հողային ծածկույթ.

Երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման արդյունքում խախտվելու է 240մ² տարածք հորատման հարթակներում և 25մ² տարածք փորձնական բացահանքի տարածքում :

Նոր ճանապարհների անցում չի կատարվելու, հետևաբար հողի խախտում ճանապարհաշինարարության արդյունքում չի նախատեսվում :

Որպես հնարավոր ազդեցություն դիտարկվում է տարածքի աղտոտումը նավթամթերքներով՝ կապված մեքենաների տեղաշարժի հետ:

Բուսական և կենդանական աշխարհ.

Բազալտային անդեզիտների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ազդեցությունները կրում են խիստ սահմանափակ և կարճաժամկետ բնույթ:

Բուսածածկը խախտվելու է 265մ² տարածքում: Բուսածածկի խախտումը ժամանակավոր է, քանի որ նմուշարկման և փաստագրման աշխատանքներից հետո կատարվելու է խախտված լանդշաֆտի լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնում:

ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ հայցվող տարածքում տարածքում չեն արձանագրվել:

Կենդանական աշխարհի դիտարկված տեսակները ունեն լայն տարածքում ՀՀ տարածքում, գրանցված չեն ՀՀ կենդանիների կարմիր գրքում: Չկան խոշոր կաթնասունների բներ/որջեր:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տեղի երևակման տարածքը ներառված չէ որևէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Գորիսի պետական արգելավայրը գտնվում է հայցվող տարածքից մոտ 20կմ հեռավորության վրա: Երևակման տարածքում բնության հուշարձաններ չկան: Ամենամոտ գտնվող բնության հուշարձաններն են «Խորձոր» V-աձև կիրճ, «Անանուն» երոզիոն ռելիեֆը և «Սատանա» բնական քանադակը, դրանք գտնվում են երևակման տարածքից մոտ 7.5կմ, 8.5կմ և 9.4կմ հեռավորությունների վրա (ուղիղ գծով):

Պատմամշակութային հուշարձաններ

Տեղ բնակավայրի պատմամշակութային հուշարձանները գտնվում են Տեղի բազալտային անդեզիտների երևակման տարածքից 0.46-6.3կմ հեռավորությունների վրա:

Հետևաբար, որևիցե ազդեցություն պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները չի ունենալու:

Թափոնների առաջացում

Տեղի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում առաջանալու են մակաբացման ապարներ, հորատման թագիկներ, նավթամթերքների և քսայուղերի մնացորդներ, կենցաղային թափոններ:

Մակաբացման ապարները ներկայացված ալյուվիալ-դելյուվիալ առաջացումներով (հողաբուսական շերտ) և բազալտների, անդեզիտաբազալտների բեկորներով : Աշխատանքների ընթացքում հորատման հրապարկների և փորձնական բացահանքի տարածքից հեռացվելու է 83.26մ³ հողաբուսական շերտ (որից՝ 11.5մ³ փորձնական բացահանքի տարածքից, 71.76մ³ հարթակների տարածքից) և 29մ³ փուշտա շերտի ապարներ :

Մակաբացման ապարները համաձայն ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2015 թվականի օգոստոսի 20-ի N244-Ն հրամանների՝ հաշվառված են 34000120 01 99 5 ծածկագրով: Դրանք դասվել են վտանգավորության 5-րդ դասին, այսինքն՝ ոչ վտանգավոր ընդերքօգտագործման թափոններ են:

Հորատման թագիկների թափոնները բարձր ամրությամբ օժտված պողպատե ձուլվածքից կազմված իներտ մնացորդներ են:

ՀՀ բնապահպանության նախարարի 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն և 2006 թվականի դեկտեմբերի 25-ի N430-Ն հրամաններով հորատման թագիկների թափոններ հաշվառված չեն :

Հորատումը և դրա հետ փոխկապակցված աշխատանքներն իրականացվելու են մասնագիտացված ընկերության կողմից, «ԱՄ ՇԻՆ 80» ՍՊԸ հորատման թագիկների կառավարման աշխատանքների չի կատարելու :

Ներքին այրման շարժիչներով աշխատող մեքենաների նորոգման-
շահագործման աշխատանքների ժամանակ առաջանալու են բանեցված շարժիչների
յուղերի թափոններ (ծածկագիր՝ 54100201 02 03 3) մոտ 25լ քանակությամբ : Կազմը՝
նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ : Բնութագիրը՝ հրդեհավտանգ,
առաջացնում են հողի և ջրի աղտոտում :

Առաջանալու են նաև բանեցված դիզելային յուղեր (ծածկագիր՝ 54100203 02 03
3) մոտ 30լ քանակությամբ : Կազմը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ
միացություններ : Բնութագիրը՝ հրդեհավտանգ, առաջացնում են հողի և ջրի
աղտոտում :

Քանի որ մեքենաների տեխնիկական սպասարկումը նախատեսվում է
կատարել Տեղ բնակավայրի, ինչպես նաև այլ հարակից բնակավայրերի տարածքում
գործող մասնագիտացված կազմակերպություններում, ապա «ԱՍ ՇԻՆ 80» ՍՊԸ այս
տեսակի թափոնների կառավարման աշխատանքների չի կատարելու :

Առաջանալու է նաև չտեսակավորված կենցաղային աղբ 1.4տ քանակությամբ,
որը պատկանում է վտանգավորության 4-րդ դասին, ծածկագիր՝ 9120040001004 :
Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ:
Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է,
ռեակցիոնունակ չէ:

Կենցաղային թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության
նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է
ըստ պայմանագրի և «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Աղմուկ, թրթռումներ

Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական
կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի
(ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական
կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է
գերազանցի 80դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով
կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հայցվող տարածքում հորատման աշխատանքների և փորձնական բացահայտման անցման ժամանակ առաջացող գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը LAէկվ ընդունված է 75դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում (Տեղ գյուղում) որոշվում է՝

$La_{տար} = La_{էկվ} - \Delta La_{հեռ} - \Delta La_{էկր} - \Delta La_{կանաչ}$ բանաձևով, որտեղ՝

$La_{էկվ}$ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, $La_{էկվ}=75$ դԲԱ,

$\Delta La_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta La_{հեռ}$ կազմում է 15դԲԱ,

$\Delta La_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (ձորակի տարածք), $\Delta La_{էկր}=10$ դԲԱ,

$\Delta La_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta La_{կանաչ}=10$ դԲԱ:

Աղմուկի մակարդակը Տեղ բնակավայրի մոտ կկազմի՝

$La_{տար} = La_{էկվ} - \Delta La_{հեռ} - \Delta La_{էկր} - \Delta La_{կանաչ} = 75 - 15 - 10 - 10 = 40$ դԲԱ

(նորման 45դԲԱ):

Տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Սանիտարական-պաշտպանիչ գոտի. 245-71 սանիտարական նորմերով երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների համար սանիտարական-պաշտպանիչ գոտու սահմանում նախատեսված չէ: Նախատեսվող գործունեության բնույթին ամենամոտը առանց պայթեցման աշխատանքների շինարարական նյութերի արդյունահանման ձեռնարկությունների աշխատանքն է, որի համար սահմանված է 50մ սանիտարական-պաշտպանիչ գոտի: Երկրաբանական ուսումնասիրության նպատակով հացվող երևակումը Տեղ բնակավայրի բնակելի շինություններից գտնվում է 230մ, Արավուս բնակավայրի շինություններից՝ 700մ հեռավորությունների վրա, ինչը գերազանցում է սահմանված սանիտարական գոտու սահմանված չափերը նվազագույնը 4.6-14 անգամ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

✓ Մեքենաների տեխնիկական սպասարկման իրականացում Տեղ բնակավայրի տարածքում գործող մասնագիտացված կազմակերպություններում, որտեղ առկա են բոլոր անհրաժեշտ պայմանները յուղերի, քսայուղերի փոխարինման, պահպանման և պահեստավորման համար: Տեղի երևակման տարածքում բանեցված դիզելային յուղերի և բանեցված շարժիչների յուղերի թափոնների պահեստավորում, պահպանում չի նախատեսվում:

✓ Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ 60լ ծավալով ամուր պոլիէթիլենային տոպրակներով, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համաատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

✓ Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:

✓ Փորձնական բացահանքի, հորատման հարթակների և մոտեցնող ճանապարհի խոնավեցում չորային եղանակներին:

✓ Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատից զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով:

✓ Հորատման հարթակների շինարարության և փորձնահան բացահանքի անցման ժամանակ վերին հողաբուսական (0.35-0.5մ, միջինը 0.46մ հզորությամբ) շերտի հեռացում, կուտակում աշխատանքների տարածքի անմիջական հարևանությամբ՝ կարճաժամկետ կտրվածքով: Փաստագրման և նմուշարկման աշխատանքներից հետո նախատեսվում է անմիջապես կատարել ռեկուլտիվացիոն աշխատանքներ:

Հորատահարթակներում (ընդհանուր մակերեսը 240մ²) հողաբուսական ծածկն առկա է շուրջ 65% մակերեսում (համաձայն դաշտում կատարված նախնական դիտարկումների տվյալների):

Հորատահարթակների ռեկուլտիվացիայի ենթակա ընդհանուր ծավալը կազմում է. $71.76\text{մ}^3 (240\text{մ}^2 \times 65\% \times 0.46 = 71.76\text{մ}^3)$:

Նախկինում խախտված տարածքի մի հատվածում նախատեսվող փորձնական բացահանքի անցման ժամանակ հողաբուսական շերտի (անդեզիտների բեկորների պարունակությամբ) ծավալը կազմում է $11.5\text{մ}^3 (25\text{մ}^2 \times 0.46 = 11.5\text{մ}^3)$:

Տեղամասի ռեկուլտիվացիայի ընդհանուր մակերեսը կկազմի 265մ^2 , իսկ ծավալը կկազմի 83.26մ^3 : Արդեն իսկ նշվել է, նախկինում խախտված տարածքի մի հատվածը՝ 25մ^2 մակերեսով օգտագործվելու է փորձնական բացահանքի անցման համար: Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են հորատհրապարակների և նախկինում խախտված տարածքի 25մ^2 հատվածում, քանի որ համաձայն ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի հոդված 3-ի 1-ին մասի 25-րդ կետի՝ ռեկուլտիվացիոն աշխատանքներն են օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումները :

Ռեկուլտիվացիոն աշխատանքները կատարվելու են երկու փուլով՝ տեխնիկական (հետփռում, հարթեցում, փխրեցում) և կենսաբանական (պարարտացում, տարախոտահացահատիկային սերմերի ցանք) :

Աշխատանքների կատարման համար գնման ենթական նյութերն են՝ մետաղյա բահեր, փոցիներ, դույլեր, բնական պարարտանյութ, բազմամյա խոտաբույսերի սերմ:

Աղյուսակ 18.

Ռեկուլտիվացիոն աշխատանքների կենսաբանական փուլի աշխատանքների նախահաշիվ

N	Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Գումարը, հազ.դրամ
1	2	3	4
1.	Աշխատավարձ	հազ.դրամ	60.0
2.	Նյութեր	հազ.դրամ	20.0
3.	Տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ	10.0
	Ընդամենը	հազ.դրամ	90.0
4.	Անուղղակի ծախսեր	հազ.դրամ	9.0
	Ընդամենը	հազ.դրամ	99.0
5.	Չնախատեսված ծախսեր	հազ.դրամ	20.25
	Ընդհանուրը		119.25

✓ Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների ապահովում: Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

- 1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,
- 2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,
- 3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

✓ Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով Տեղի երևակման երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

✓ Նախքան աշխատանքների մեկնարկը կկատարվի տարածքների զննում կրկնակի երթուղիներով՝ ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման նպատակով (պայմանագրային հիմունքներով, կենսաբանի կողմից): ՀՀ բույսերի կամ կենդանիների կարմիր գրքում նշված տեսակների դիտարկման դեպքում, նախատեսվում է այդ մասին իրազեկել ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը, կազմակերպել աշխատանքային խումբ, մշակել գործողությունների ծրագիր՝ ազդեցությունները բացառելու նպատակով: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ այդ ընթացքում չեն կատարվելու:

✓ Պատահական գտածոների ընթացակարգ, հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- 1) համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
 - 2) գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
 - 3) արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
 - 4) պետական մարմինների ծանուցում,
 - 5) պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շահագործական աշխատանքների ուշացումները:
- ✓ Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգության տեխնիկայի կանոններին:
- ✓ Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի և թրթռումների նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Երևակման տարածքում կտեղադրվի շարժական վագոն-տնակ, որը կծառայի աշխատակիցների հանգստի և սնունդ ընդունելու համար :
- Զրցուղարան չի նախատեսվում : Տեղ բնակավայրում վարձվելու է տուն բոլոր կենցաղային հարմարություններով, որտեղ կկազմակերպվի աշխատակիցների կացությունը դաշտային փուլի ընթացքում :

6. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Ծրագրավորվող երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները կկատարվեն ՀՀ Աշխատանքային օրենսգրքի, ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի և «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի և այլ նորմատիվային փաստաթղթերի դրույթներին համապատասխան:

Մասնավորապես, «ԱՄ Շին 80» ՍՊ ընկերության վարչակազմը պարտավորվում է ապահովել աշխատանքների տեխնիկական անվտանգության հետ կապված հետևյալ պահանջները.

- աշխատանքի են թույլատրվում համապատասխան մասնագիտական կրթություն կամ որակավորում ունեցող անձիք,

- աշխատանքներում ներգրավված ողջ անձնակազմը յուրաքանչյուր դաշտային սեզոնից առաջ անցնում է պարտադիր անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում,

- բացառվում է աշխատանքների իրականացումը այն տարածներում, որտեղ հնարավոր են սողանքային, քարաթափման, սելավային երևույթներ կամ առկա է ջրհեղեղի վտանգ,

- դաշտային պայմաններում աշխատանքներ իրականացնող անձնակազմը պետք է ունենա համապատասխան հանդերձանք, պիտույքներ, առաջին բժշկական օգնության անհատական պարագաներ, արտակարգ իրավիճակի վերաբերյալ ազդարարման գործիքակազմ,

- երկրաբանական երթուղիները իրականացվելու են առնվազն երկու աշխատակցի մասնակցությամբ,

- երկրաբանական երթուղիները կատարվելու են բացառապես օրվա լուսավոր ժամանակահատվածում,

- վտանգավոր տեխնիկական օբյեկտների (էլեկտրահաղորդման օղային գծեր, կաբելային գծեր, գազատարեր, երկաթգիծ և այլն) պահպանման գոտիներում աշխատանքների իրականացման անհրաժեշտության դեպքում դրանք համաձայնեցվում են տեխնիկական օբյեկտները շահագործող կազմակերպությունների հետ: Երկրաբանահետախուզական աշխատանքներ

իրականացնող մասնագետներին տրամադրվում են վտանգավոր գոտիների բաշխումը արտահայտող քարտեզներ,

- էլեկտրական ցանցերի ենթակառուցվածքների տարածքում մեքենաների տեղաշարժը կատարվում է բացառապես այն հատվածներով, որտեղ ճանապարհի հարթության և օդային զծերի միջև առկա անհրաժեշտ տարածություն,

- բոլոր սարքավորումները շահագործվում են տեխնիկական փաստաթղթերին համապատասխան,

- արգելվում է մեխանիզմների և սարքավորումների շահագործում տեխնիկական անձնագրերով սահմանված բեռնվածությունների (ճնշում, հոսանքի ուժ, լարում և այլն) գերազանցման դեպքում,

- կտրող սայրերով գործիքների, սարքերի տեղափոխումը պետք է իրականացվի պաշտպանիչ ծածկաշապիկներով,

- աշխատաժամանակի առավելագույն տևողությունը չի գերազանցելու օրական 10 ժամից (հանգստի և սնվելու համար՝ ընդմիջումը ներառյալ),

- աշխատանքները պետք է իրականացվեն ընդհատվող՝ 6-օրյա աշխատանքային շաբաթով,

- աշխատանքային շաբաթը ընդհատվելու է նաև տոնական ու հիշատակի հանգստյան օրերին:

Աշխատակիցները պետք է ապահովված լինեն հանգստի և սննդի ընդունման հարմարավետ տարածքով՝ աշխատանքները սպասարկվելու են բեռնարկղային տիպի ճաշարանն ու ջրցուղարանը:

7. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար հայցվող տարածքում նախատեսվում են շարժական կապի միջոցներ, առաջին բուժօգնության միջոցներ, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Երևակման տարածքում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

1) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում: Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ երևակման տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով: Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վազոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ:

2) Երևակման տարածքում սողանքային մարմիններ չկան, հետևաբար սողանքային երևույթների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն լինելու:

3) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Տեղամասի տարածքում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

3) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ):

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով արտադրական երևակման տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ;
4. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է երևակման տեղամասում);
5. աղմուկի մակարդակի չափում Տեղ բնակավայրի բնակելի շինությունների մոտ:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով՝ կենսաբանի և բուսականի կողմից:

Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն:

Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 715.0հազ.դրամ:


Մշտադիտարկումների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է նաև աղյուսակ 19-ում:

Աղյուսակ 19.

Մշտադիտարկումների օբյեկտը և վայրը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
1	2	3	4
Մթնոլորտային օդ, հայցվող տարածք, աշխատանքների իրականացման վայր	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Աշխատանքների իրականացման վայր, շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ, երևակման տարածք	Հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Ամսական մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. Հայցվող տարածք	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Տարեկան մեկ անգամ
Աղմուկի մակարդակ	Չայնային բնութագիր	Չափում ավտոմատ սարքերով	Տարեկան մեկ անգամ

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկար 18-ում:

ՄՇՏԱՂԻՏԱՐԿՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


- Մթնոլորտային օդի մշտադիտարկման կետ
- Նավթամթերքներով տարածքի աղտոտման մշտադիտարկման կետ
- Աղմուկի մակարդակի չափման կետ
- ◡ Կենսաբազմազանության մշտադիտարկման տարածք

Նկար 18.

Մշտադիտարկման կետերի տեղադիրքը արտացոլված է պայմանականորեն, այն կարող է փոփոխվել՝ կախված տվյալ պահին աշխատանքների իրականացման վայրից :

Գրականություն

1. Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի պաշտոնական կայքի
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. Животный мир Армянской ССР. Даль С.К ,1954
7. “Флора и растительность рек и озер Армении и их народнохозяйственное значение”. А.М. Барсегян
8. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
9. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
10. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
11. “Цветущие уголки биоразнообразия”, FAO,
<http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
12. ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք
13. Տեղ համայնքի պաշտոնական կայք
14. «Գորիսի անտառտնտեսություն» մ/ճ անտառկառավարման պլան



Հայցվող տարածքի իրադրային հատակագիծ